Ակտ թիվ 3

19.03.2012թ. գ. Լեռնանցք

Լոռու մարզի համայնքներում 2012թ. վարչական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրի համաձայն(ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2012թ. հունվարի 30-ի թիվ 11-Ա և 2012թ. հունվարի 30-ի 02-ն հրամաններ, ՀՀ Լոռու մարզպետի 2012թ. փետրվարի 13-ի թիվ 48 և 2012թ. մարտի 5-ի թիվ 81 կարգադրությունների), մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ Լ. Բերոյանս(հանձնաժողովի նախագահ), իրավաբանական բաժնի պետ՝ Ա.Սահակյանս, հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ՝ Ռ. Քոչարյանս, ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ Ժ. Ղազարյանս, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ Վ. Հովհաննիսյանս, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Ա. Բեջանյանս, քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ՝ Գ. Հախինյանս Լեռնանցքի գյուղապետարանում կատարեցինք վարչական ստուգում: Ստուգումը ընդգրկում է 2009թ. հունվարի 1-ից 2012թ. հունվարի 1-ը ընկած ժամանակաշրջանը: Ստուգման աշխատանքներին մասնակցում էին Լեռնանցք համայնքի ղեկավար Լ. Աբգարյանը, աշխատակազմի քարտուղար՝ Հ. Չախոյանը, աշխատակազմի առաջատար մասնագետ - հաշվապահ՝ Ա. Մացակյանը:

Գյուղապետարանի գործունեությունը կանոնակարգվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ Աշխատանքային օրենսգրքով, գյուղապետարանի կանոնադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի վերաբերյալ: Բյուջեի սեփական եկամուտների հավաքագրումը 2009թ.-ին կատարվել է 124.7%-ով, 2010թ.-ին՝ 102.1%-ով, 2011թ.-ին՝ 111.7%-ով: Սեփական եկամուտներից մուտքերը 2011թ.-ին 2009թ. նկատմամբ նվազել են 158.9 հազ. դրամով: Հիմնականում թերակատարվել են պահուստային հողերի վարձավճարների գանձման ցուցանիշները: Առանձին տարիների թերակատարվել են նաև հողի հարկի, տեղական տուրքերի և այլ մուտքերի գծով գանձումները:

Համայնքի բյուջեի եկամուտները 2009-2011թվականներին

Բյուջեի եկամուտներ	2009թ.			2010թ.			2011թ.		
	Նախա-տեսված	Փաստա-ցի	%	Նախա-տեսված	Փաստա-ցի	%	Նախա-տեսված	Փաստա-ցի	%
ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	20269.0	21043.7	103.8	23243.0	23320.5	100.3	22495.5	22826.9	101.5
Հողի հարկ	1635.7	2231.3	136.4	1741.8	1686.0	96.8	1668.1	1669.5	100.1
Գույքահարկ	600.0	1062.6	177.1	800.0	964.1	120.5	700.0	1051.4	150.2
Տեղական տուրք	110.0	15.0	13.6	300.0	324.9	108.3	365.0	455.0	124.6
Պահուստային հողերի և գույքի վարձավճար.	667.0	498.5	74.7	623.0	441.1	70.8	514.0	376.0	73.2
Այլ մուտքեր	110.0	100.0	90.9	200.0	326.2	163.1	110.0	196.6	178.7

Ընդամենը սեփական եկամուտներ	**3132.7**	**3907.4**	**124.7**	**3664.8**	**3742.3**	**102.1**	**3357.1**	**3748.5**	**111.7**
Պետական բյուջից տրվող դոտացիա	16476.3	16476.3	100.0	18978.2	18978.2	100.0	18778.4	18778.4	100.0
Անասնաբուժական ծառայություն	660.0	660.0	100.0	600.0	600.0	100.0	360.0	300.0	83.3
ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	**2098.0**	**798.0**	**38.0**	**2016.0**	-	-			
Վարչական բյուջեից ֆոնդային	2098.0	798.0	38.0	-	-	-			
ԸՆԴԱՄԵՆԸ	**20269.0**	**21043.7**	**103.8**	**23243.0**	**23320.5**	**100.3**	**22495.5**	**22826.9**	**101.5**

Օտարումներից մուտքերը կազմել են 2009թ.-ին՝ 470.0 (ավտոմեքենայի օտարում աճուրդով), 2010թ.-ին՝ 4340.6 հազ. դրամ(հողի օտարում աճուրդով), 2011թ.-ին՝ 264.2 հազ. դրամ(հողի օտարում ուղղակի վաճառքով):

Դրամարկղային ծախսերը 2009-2011թվականներին

Բյուջետային ծախսեր ըստ տնտեսագիտական դասակարգման	**2009թ**	**2010թ**	**2011թ**
Ա. Ընթացիկ ծախսեր	**16031.6**	**17221.6**	**19420.5**
Աշխատավարձեր և հավելավճարներ	6729.5	7514.5	8774.2
Պարգևատրումներ նդրամական խրախոսումներ	547.0	620.0	1280.0
Սոցիալական ապահովության վճարներ	1376.4	1560.9	1744.4
Էներգետիկ ծառայություններ	110.0	105.0	180.0
Կոմունալ ծառայություններ	-	-	100.0
Կապի ծառայություններ	471.0	375.0	451.1
Ներքին գործուղումներ	85.0	120.0	150.0
Ապահովագրական ծախսեր	10.0	69.0	135.4
Համակարգչային ծառայություններ	-	25.0	-
Տեղեկատվական ծառայություններ	57.0	75.0	69.2
Մասնագիտական ծառայություններ	675.0	607.0	383.8
Ընթացիկ նորոգումներ	-	-	450.0
Գրասենյակային նյութեր	300.0	300.0	280.0
Տրանսպորտային նյութեր	1750.0	1900.0	2520.0
Առողջապահական և լաբորատոր նյութեր	90.0	100.0	75.0
Հատուկ նպատակային այլ նյութեր	840.7	1307.2	835.8
Դրամաշնորհներ	1370.0	650.0	-
Սոցիալական օգնություններ	1360.0	1670.0	1810.0
Այլ ծախսեր	260.0	223.0	181.6
Բ. Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	**1600.0**	**5717.5**	**6925.0**
Շենք և շինությունների կառուցում	1600.0	-	1000.0
Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	-	2100.0	995.0
Տրանսպորտային սարքավորումներ(ավտոմեքենա)	-	3217.5	-
Վարչական սարքավորումներ	-	400.0	210.0
Քարտեզագրման աշխատանքներ	-	-	4720.0
ԸՆԴԱՄԵՆԸ	**17631.6**	**22939.1**	**26345.5**

Դրամարկղային ծախսերը 2011թ.-ին 2009թ. նկատմամբ աճել են 49.4%-ով, այդ թվում՝ ընթացիկ ծախսեր՝ 21.1%-ով, ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր (կապիտալ)՝ 332.8%-ով:

Հաշվապահական հաշվառման և դրամարկղային գործառնությունների վարման վերաբերյալ: Հաշվապահական հաշվառումը չի կազմակերպվել և վարվել «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի և այն կարգավորող իրավական ակտերի դրույթներին ու պահանջներին համապատասխան, չի տարվել մեմորիալ-օրդերային եղանակով, կատարված ֆինանսական գործառույթներին հաշվային պլանին համապատասխան հաշվապահական ձևակերպումներ չեն տրվել:

Գանձապահի հետ չի կնքվել պայմանագիր նյութական պատասխանատվության և իրեն հանձնված դրամական միջոցների պահպանման վերաբերյալ:

Արձակուրդների տրամադրման և աշխատավարձերի ու արձակուրդային վճարների հաշվարկման վերաբերյալ: Աշխատավարձերը հաշվարկվել են բյուջեով նախատեսված դրույքաչափերով: Արձակուրդային գումարները հաշվարկվել են հիմնականում սահմանված կարգով, սակայն արձակուրդին հաջորդող ամսվա աշխատավարձերի հաշվարկներում առկա են խախտումներ: Աշխատողներին հիմնականում արձակուրդ տրամադրվել է ամսվա առաջին աշխատանքային օրվանից և 32 օրացուցային օր կամ 24 աշխատանքային օր տրամադրելու դեպքում արձակուրդային օրերից վերջի մի քանի օր ընկնում է հաջորդող ամսվա մեջ և հաջորդ ամսվա աշխատավարձերի հաշվարկման ժամանակ աշխատավարձի դրույքաչափից պետք է հանել տվյալ ամսվա մեջ ընկած արձակուրդի օրերի աշխատավարձը: Փաստացի որոշ օրերի համար աշխատողները գտնվելով արձակուրդում հաշվարկվել է աշխատավարձ, կամ նույն օրվա համար հաշվարկվել է և աշխատավարձ և արձակուրդայի գումար: Նշված խախտման հետևանքով ավել է հաշվարկվել 213149 դրամ աշխատավարձ, այդ թվում.

Աշխատողի անուն, ազգանուն	*2009թ.*	*2010թ.*	*2011թ.*	*Ընդամենը*
Լևիկ Աբգարյան	17857	19773	23181	60811
Մարտիկ Վիրաբյան	7727	8025	4285	20037
Համլետ Զախոյան	6818	7143	15454	29415
Գևորգ Վարդանյան	9285	9286	10714	29285
Գայանե Վարդանյան	5909	8571	10000	24480
Սվետլանա Բաղդասարյան	-	2738	4078	6816
Արաքսյա Մացակյան	5909	10000	10227	26136
Տաթևիկ Մելոյան	-	5455	10714	16169
Ընդամենը	*53505*	*70991*	*88653*	*213149*

Արձակուրդների տրամադրման հրամաններում կամ կարգադրություններում չեն նշվում արձակուրդի տևողությունը, արձակուրդի ավարտման և աշխատանքի ներկայանալու օրերը:

Գործուղման գումարների և տրանսպորտային ծախսերի վերաբերյալ: Գործուղում տրամադրելու վերաբերյալ տրված կարգադրություններում և հրամաններում հստակ չեն նշվում գործուղման նպատակը: Ծախսերը հիմնավորող փաստաթղթերում առկա են թերություններ, առանձին դեպքերում հաշվարկները կատարվել են ոչ սահմանված կարգով:

Տրանսպորտային ծախսերը 2009թ. կազմել են 1750.0 հազ. դրամ, 2010թ.-ին՝ 1900.0 հազ. դրամ, 2011թ.-ին՝ 2520.0 հազ. դրամ: Ծախսերը հիմնականում կատարվել են վառելիք և պահեստամասեր ձեռք բերելու նպատակով: Բացի գյուղապետարանի ծառայողական ավտոմեքենայից նշված ծախսերով շահագործվում է նաև գյուղապետարանի հաշվեկշռում գտնվող ավտոբուսը, որը դպրոցահասակ երեխաներին համայնքի տարբեր թաղամասերից տեղափոխում է դպրոց: Բենզինի ծախսերը հիմնավորելու համար լրացվել են երթուղային թերթիկներ, որոնք սակայն լրացված են թերություններով՝ չեն լրացվում ցուցիչի տվյալները, երթուղիները(ըստ օրերի և կիլոմետրերի), ծախսի նորման և համաձայն կիլոմետրերի և ծախսի նորմայի ծախսված բենզինի քանակությունը: Ավտոպահեստամասերի ծախսը հիմնավորելու դեպքում առանձին դեպքերում չեն կազմվում թերությունների և գնված պահեստամասերի տեղադրման ակտեր:

Կայացված աճուրդների վերաբերյալ: 2009թ. աճուրդով օտարվել է գյուղապետարանին պատկանող «ՎԱԶ» 2109 ավտոմեքենան, որը գնահատվել է «Մարմոս» ՍՊԸ-ի կողմից: Աճուրդի ժամանակ մասնակցի կողմից չի վճարվել 1000 դրամ աճուրդի մասնակցության վճարը: 2010թ. աճուրդով վաճառվել է բնակարանաշինության համար տնամերձ հողամասեր:

Աճուրդային հանձնաժողովի արձանագրությունների գիրքը լրացված է թերություններով:

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի տարածքում գործում է մեկ մթերային խանութ: Տեղական տուրք է սահմանվել ալկահոլային խմիչքների վաճառքի և ծխախոտի վաճառքի թույլտվության համար եռամսյակը՝ 2009թ.-ին՝ 6000 դրամ, 2010-ին՝ 5000 դրամ: Խախտել է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի հոդված 9-ի 4-րդ կետի 1-ի և 2-րդ ենթակետերի պահանջները՝ ըստ որի տեղական տուրքերը պետք է սահմանել ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար առանձին, իսկ ծխախոտի վաճառքի թույլտվության համար՝ առանձին: 2011թ. ծխախոտի և ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքերը սահմանվել են եռամսյակը 1500 դրամ: Սահմանված կարգով չեն մուծվել վաճառքի թույլտվության տուրքի գումարները և չի կայացվել համապատասխան որոշում, կամ տնտեսվարող սուբյեկտը վարել է ապօրինի գործունեություն:

Առևտրի և ծառայությունների ոլորտում համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի և «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17.1 հոդվածի չեն իրականացվել համապատասխան հսկողություն: Ընդունված կարգի համաձայն համայնքի ղեկավարը իրավասու է առևտրի օբյեկտներում կատարել ստուգումներ և անօրինական գործունեության համար նշանակել համապատասխան տուգանքներ:

Հիմնականում գանձվել է շինարարության և քանդման թույլտվության համար տեղական տուրքեր, սակայն համայնքի ղեկավարի կողմից համապատասխան որոշում չի տրվել:

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Գոտիավորման սխեման կազմված չէ և ընթացքի մեջ է, առաժմ օգտվում են ժամանակավոր սխեմայից: Հողերի օտարումները կատարվել են օրենքով սահմանված կարգով:

29.5 հա վարելահողերի վարձակալության պայմանագրերը կնքվել են մինչև 2009թ.-ը, պայմանագրերը կնքված են սահմանված կարգով, սակայն այն առ ոչինչ է, քանի որ չունեն պետական գրանցում: 46.0հա խոտհարքից առանց պայմանագրերի ցուցակային կարգով վարձակալությամբ տրված է 17.0 հա: Արոտավայրերի վարձակալության պայմանագրեր նույնպես չեն կնքվում, վարձավճարները գանձվում են ըստ անասնագլխաքանակի: Այլ հողերից վարձակալությամբ չեն տրվել և չեն օտարվել:

Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողություն չի իրականացվել, ապօրինի հողօգտագործման փաստեր չի արձանագրվել, քանի որ չունեն ստուգումների մատյան: Հողային հաշվեկշիռը կազմված է և գրանցված է հաշվառման մատյանում:

Համայնքում գեոդեզիական կետերը տեղադրված են 2002թ.-ից և պահպանվում են:

ԱՎԱԳԱՆՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1) Ավագանին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան իր կանոնակարգը ընդունել է 2008թ. դեկտեմբերի 17-ի թիվ 30 որոշմամբ, որոշումը ՀՀ արդարադատության նախարարություն չի ուղարկվել.

2) 2009 թվականի փետրվարի 05-ի թիվ 8 որոշմամբ հաստատել է համայնքի զարգացման ծրագրը, սահմանված ժամկետում, որոշումը ՀՀ արդարադատության նախարարություն չի ուղարկվել.

3) ա/ համայնքի ավագանին սահմանված կարգով հաստատել է 2009, 2010, 2011, 2012թթ. համայնքի բյուջեները,

բ/ հաստատել է բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները,

գ/ հաստատել է բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունները, 16.01.2010թ. թիվ 1 որոշմամբ համայնքի ղեկավարի և աշխատակազմի կատարած աշխատանքները գնահատվել են բավարար, այլ ոչ թե հաստատվել է 2009թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.

4) համայնքի բյուջեի կատարման վերահսկման առումով պետք է նշել, որ համայնքի ավագանուն ներկայացվել է համայնքի բյուջեի կատարման ընթացքի մասին 2009թ. 3-րդ եռամսյակի, 2010թ. և 2011թ. եռամսյակային հաղորդումները և բյուջեի կատարման ընթացքի մասին չեն ներկայացվել 2009թ. 1-ին և 2-րդ եռամսյակների հաղորդումները.

5) չի որոշվել կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները.

6) համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ վերահսկողության իրականացման առումով պետք է նշել, որ համայնքի ղեկավարի անհատական ակտերը սահմանված ժամկետում ավագանու անդամներին չի ուղարկվել և ավագանու նստավայրում չի փակցվել.

7) համայնքի ղեկավարի որոշումները դատական կարգով չեն վիճարկվել.

8) 10.01.2009թ. թիվ 1, 03.12.2009թ. թիվ 23, 02.12.2010թ. թիվ 25 և 09.12.2011թ. թիվ 18 որոշումներով սահմանվել է համայնքի ղեկավարի վարձատրության չափը.

9) համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին որոշումներ չեն կայացվել.

10) 08.07.2010թ. թիվ 18 որոշմամբ հաստատվել են առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները, որոշումը ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն: Ավագանու 10.11.2010թ. թիվ 20 որոշմամբ 08.07.2010թ. թիվ 18 որոշումը անվավեր է ճանաչվել, նոր կանոններ չեն հաստատվել.

11) 10.01.2009թ. թիվ 2-Ն, 03.12.2009թ. թիվ 25-Ն, 02.12.2010թ. թիվ 26-Ն, 09.12.2011թ. թիվ 19-Ն որոշումներով սահմանվել են 2009, 2010, 2011, 2012թթ. համար տեղական տուրքերի և վճարների տեսակները ու դրույքաչափերը, առաջին երկու որոշումները չեն ուղարկվել ՀՀ արդարադատության նախարարություն, մյուս երկուսը ուղարկվել են: 03.12.2009թ. թիվ 25-Ն որոշումը չի համապատասխանում «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներին:

12) համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարներ չեն գանձվում,

13) համայնքի ղեկավարի առաջարկությամբ համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարելու մասին որոշման կայացում, դրանց վարձավճարների և օտարման գների չափերի և պայմանների, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գների հաստատում.

ա/ 06.03.2009թ. թիվ 11 որոշմամբ սահմանվել են համայնքային սեփականություն համարվող հողերի օտարման և վարձակալության տրամադրման գները՝ օտարման դեպքում կադաստրային արժեքի 50% չափով, վարձակալության տրամադրելու դեպքում զուտ եկամտի 15%-ի չափով: Որոշումը նորմատիվ է սակայն ՀՀ արդարադատության նախարարություն չի ուղարկվել և չի հրապարակվել:

բ/ 02.09.2009թ. թիվ 20 որոշմամբ ավագանին համաձայնություն է տվել համայնքային սեփականություն համարվող գույքը օտարել, որոշել է մեկնարկային գինը, օտարման պայմանները.

գ/ 15.02.2009թ. թիվ 4, 09.03.2010թ. թիվ 6, 25.03.2010թ. թիվ 7, 26.04.2010թ. թիվ 13, 08.07.2010թ. թիվ 17 և 06.10.2010թ. թիվ 19/ա որոշումներով ավագանին համաձայնություն է տվել համայնքային սեփականություն համարվող հողերը օտարել, հաստատել է օտարման

պայմանները և մեկնարկային գները: Նշված որոշումները ձևակերպված են «ավագանին ելնելով անհրաժեշտությունից տալիս է իր համաձայնությունը տալ հայտարարություն օտարելու մասին», մինչ դեռ ավագանին պետք է որոշում կայացնի օտարման մասին.

դ/ 17.12.2009թ. թիվ 31-34, 02.12.2010թ. թիվ 28-29 և 14.04.2011թ. թիվ 5-7 որոշումներով համայնքային սեփականություն համարվող կիսակառույցները անհատույց փոխանցվել են համայնքի բնակիչներին: Նշված որոշումները կայացվել են համաձայն ՀՀ կառավարության 19.02.2004թ. թիվ 157-Ն որոշման, ինչպես նաև այս որոշումների նախաբաններում հղում է կատարվել համայնքի ավագանու «համապատասխան» որոշմանը: Իրավական ակտում հղում կատարելիս պետք է նշվի իրավական ակտի կրճատ անվանումը:

14) 10.01.2009թ. թիվ 3, 05.02.2009թ. թիվ 6, 15.07.2009թ. թիվ 13, 03.12.2009թ. թիվ 24, 20.12.2010թ. թիվ 31, 13.12.2011թ. թիվ 22 որոշումներով հաստատվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը: 10.01.2009թ. թիվ 3 որոշմամբ սահմանվել է աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը 9, սակայն հաստիքացուցակում ընդգրկված է 8 պաշտոն:

15) բնակավայրի քաղաքաշինական կանոնադրություն չի հաստատվել.

16) 03.12.2009թ. թիվ 26, 02.12.2010թ. թիվ 27, 09.12.2011թ. թիվ 20 որոշումներով հաստատվել են համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը.

17) 15.07.2009թ. թիվ 15, 08.07.2010թ. թիվ 16, 29.07.2011թ. թիվ 12 որոշումներով հաստատվել են այդ տարիների դրությամբ համայնքի հողային հաշվեկշիռները.

18) 14.04.2011թ. թիվ 8-Ա որոշմամբ հաստատվել է համայնքի հոգաբարձության և խնամակալության հանձնաժողովի կազմը.

19) 19.01.2010թ. թիվ 2 որոշմամբ հաստատվել է ՏԻՄ-երի կողմից քաղաքացիների ընդունելության կարգը.

20) երեք անգամ չի ապահովվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերության պահանջը՝ 2009 թվականի 4-րդ նիստը կայացել է մարտի 6-ին 5-րդ նիստը՝ հուլիսի 15-ին: 2010 թվականի 6-րդ նիստը կայացել է ապրիլի 26-ին, 7-րդը՝ հուլիսի 8-ին, 8-րդը՝ հոկտեմբերի 6-ին:

Համայնքի ավագանու 14.06.2011թ. թիվ 10 որոշումը հստակ չէ, որոշման նախաբանը գրված է որոշման վերջում, որոշման տեքստը չի արտացոլում թե ինչի մասին է որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՅԼ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) Հրավիրվել և վարվել են ավագանու կանոնակարգով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ավագանու նիստեր.

2) համայնքի ղեկավարի անհատական ակտերը ընդունելուց հետո երկօրյա ժամկետում համայնքի ավագանու անդամներին չեն ուղարկվել և համայնքի ավագանու նստավայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում չեն փակցվել.

3) համայնքի զարգացման քառամյա ծրագրը ներկայացվել է ավագանու հաստատմանը.

4) աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացվել են ավագանու հաստատմանը.

5)համայնքի ավագանուն ներկայացրել է առաջարկություններ՝ համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու մասին.

6) աշխարհագրական օբյեկտներին տրամադրել է հասցեներ.

8) իր իրավասության շրջանակում ընդունել է որոշումներ և արձակել է կարգադրություններ.

9) կազմակերպել է համայնքի բնակիչների հաշվառումը.

10) իրականացրել է քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է առել քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները և ձեռնարկել է համապատասխան միջոցներ.

11) համայնքի զինապարտների գրանցամատյանը ստուգման պահի գտնվում էր Սպիտակի տարածաշրջանային զինվորական կոմիսարիատում 7-14-րդ այուները լրացնելու նպատակով:

Գյուղապետարանում առկա է ցուցատախտակ, ցուցատախտակին փակցված է 2011թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը: Չեն փակցված 2012թ. համար սահմանված տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը:

Գյուղապետարանում առկա է քաղաքացիների դիմումների, բողոքների և առաջարկությունների մտից մատյան, գործադիր, տարածքային կառավարման մարմիններից և կազմակերպություններից ստացված գրությունների մտից մատյան, և կազմակերպություններ ուղարկվող գրությունների ելից մատյան:

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՄ

1. ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի «Հասարակությանն իրավական ակտերի մասին իրազեկման և իրավական ակտերի հաշվառման կարգերը հաստատելու մասին » N 1146-Ն որոշման համաձայն՝ իրավական ակտն ընդունող մարմինները պարտավոր են պահել իրենց ընդունած իրավական ակտերի հաշվառման մատյան:

Համայնքի ղեկավարի աշխատակազմում խախտվել են ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման պահանջները և համայնքի ավագանու որոշումների, համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների, գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի հրամանների հաշվառման մատյանները սկսել են վարել միայն 2010 թվականից:

Հաշվառման մատյանները կարված, կնիքված և թերթերը համարակալված չեն, լրացվել են թերի (մասնավորապես՝ չկա նշված իրավական ակտի տեսակը, իրավական ակտի ստորագրման տարին, ամիսը /տառերով/, ամսաթիվը):

2. ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 16-ի N 197-Ա հրամանի N 32 հավելվածով հաստատված (հետագայում 27.07.2007թ. N 41 –Ա և 19.05.2009թ. N 113 – Ա հրամաններով կատարված փոփոխություններով) Լեռնանցքի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկի համաձայն՝ աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները 5-ն են: Համայնքի ավագանու 13.12.2011թ. N 22 որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը: Հաստատված հաստիքացուցակը համայնքային ծառայության պաշտոնների մասով համապատասխանում է ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի կողմից հաստատված պաշտոնների անվանացանկին, իսկ պաշտոնային դրույքաչափերը «Համայնքային ծառայության մասին» և «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքների պահանջներին:

3.Համայնքի ղեկավարի 2009 թվականի փետրվարի 6-ի N 03 որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայողների պաշտոնների նոր անձնագրերը՝ համաձայն NN 1–6 հավելվածների, հետագայում ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 19.05.2009թ. N 113–Ա հրամանով աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկից հանվել է 1–ին կարգի մասնագետի(ծածկագիր՝ 3.2-1) պաշտոնը, սակայն մինչ օրս ուժը կորցրած չի ճանաչվել այդ պաշտոնի անձնագիրը հաստատելու մասին 2009 թվականի փետրվարի 6-ի N 03 որոշման N 5 հավելվածը:

«Համայնքային ծառայության մասին» նախկինում գործող ՀՀ օրենքի և ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 07.09.2006թ. N 11-Ն նախկին հրամանով սահմանված կարգի համապատասխան համայնքի ղեկավարը 2008 թվականի մարտի 7-ին N 4 որոշմամբ հաստատել է համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ և համայնքային ծառայողների ատեստավորում անցկացնելու համար թեստավորման հարցաշարերը, սակայն հետագայում «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի փոփոխությամբ՝ 2008 թվականի հոկտեմբեր ամսից թեստավորման

հարցաշարերի կազմման իրավասությունը վերապահվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմին:

Այս առումով՝ անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2008 թվականի մարտի 7-ին N 4 որոշումը և 2009 թվականի փետրվարի 6-ի N 03 որոշման N 5 հավելվածը:

4. Աշխատակազմի համայնքային ծառայողների անձնական գործերը ընդհանուր առմամբ վարվում են ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 7-ի N 20-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգին համապատասխան, սակայն թերի են լրացված աշխատանքային գրքույկները, վերգիրները և անձնական թերթիկները(Ձև N 2): Աշխատակազմի քարտուղարի, առաջատար մասնագետ - հաշվապահի (ծածկագիր՝ 3.1-1) անձնական գործերում չկար դասային աստիճան շնորհելու մասին իրավական ակտերի պատճենները: Աշխատակազմի քարտուղարի և առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-3) անձնական գործերում չկար ժամկետային աշխատանքային պայմանագրերը: Առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 3.1-3) Տաթևիկ Մելոյանի անձնական գործում առկա էր ոչ թե մրցույթում հաղթելուց հետո այդ պաշտոնում նշանակվելու համար տրված դիմումը, այլ մրցույթին մասնակցելու համար մրցութային հանձնաժողովին ուղղված դիմումը:

5. «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվում են համապատասխան համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու մինչև հինգ անդամներ և մարզպետարանի երեք ներկայացուցիչ, իսկ նշված հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը որոշում է համայնքի ավագանին:

Համայնքի ավագանու 2009 թվականի փետրվարի 5-ի N 7 որոշմամբ հաստատվել է հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմը: Համայնքի ղեկավարը 2009 թվականի փետրվարի 6-ի N 04 որոշմամբ, օրենքով սահմանված կարգով հաստատել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմը, սակայն որոշման 2-րդ կետով ուժը կորցրած է ճանաչել 2006 թվականի նոյեմբերի 3-ի «Համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողով կազմելու մասին» N 31 որոշումը: Պետք է նշել որ ըստ համայնքի ղեկավարի որոշումների գրքի՝ 2006 թվականին համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 30 որոշումներ(N 30 որոշումը ընդունվել է 2006 թվականի դեկտեմբերի 28- ին):

Վերլուծելով համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովներ կազմելու գործընթացը՝ պարզվեց, որ մրցութային և ատեստավորման նախորդ հանձնաժողովների կազմը համայնքի ղեկավարը հաստատել էր 2006 թվականի նոյեմբերի 3-ի N 31 կարգադրությամբ:

Հետագայում, առանց ուժը կորցրած ճանաչելու մրցութային և ատեստավորման հանձնաժողովներ կազմելու իր 2009 թվականի փետրվարի 6-ի N 04 որոշումը և 2006 թվականի նոյեմբերի 3-ի N 31 կարգադրությունը, համայնքի ղեկավարը 2010 թվականի փետրվարի 11-ի N 07 և 2011 թվականի փետրվարի 28-ի N 04 կարգադրություններով կազմել է մրցութային և ատեստավորման նոր հանձնաժողովներ:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով հաստատել աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմը (ուժը կորցրած ճանաչելով համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի ձևավորմանը վերաբերող համայնքի ղեկավարի նախորդ բոլոր որոշումները և կարգադրությունները), որից հետո սահմանված ժամկետում հրավիրել հանձնաժողովի աշխատակարգային նիստ և ընտրել հանձնաժողովի նախագահի տեղակալ:

6. Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահի (ծածկագիր՝ 3.1-1) Արաքսյա Մացակյանը, աշխատակազմի առաջատար մասնագետ

(ծածկագիր՝ 3.1-2) Գևորգ Վարդանյանը և առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 3.2-2) Գայանե Վարդանյանը ատեստավորվել են 2008 թվականի հոկտեմբերի 6-ին:

Համայնքի ղեկավարի 2008 թվականի հոկտեմբերի 7-ի N 26 որոշմամբ աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահին շնորհվել է «ՀՀ համայնքային ծառայության կրտսեր պաշտոնի 1-ին ենթախմբի ծառայողի դասային աստիճան», N 27 որոշմամբ աշխատակազմի առաջատար մասնագետին «ՀՀ համայնքային ծառայության կրտսեր պաշտոնի 1-ին ենթախմբի ծառայողի դասային աստիճան», իսկ N 28 որոշմամբ աշխատակազմի առաջին կարգի մասնագետին «ՀՀ համայնքային ծառայության կրտսեր պաշտոնի 2-րդ ենթախմբի ծառայողի դասային աստիճան» :

Այս առումով անհրաժեշտ է սահմանված կարգով փոփոխություններ կատարել համայնքի ղեկավարի 2008 թվականի հոկտեմբերի 7-ի NN 26-28 որոշումներում և աշխատակազմի համայնքային ծառայողներին շնորհել համապատասխան դասային աստիճաններ համաձայն՝ «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:

7. «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի, պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու, մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում այդ պաշտոնն զբաղեցվում է պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հայեցողությամբ՝ տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված փոխարինող համայնքային ծառայողի կողմից մինչև վեց ամիս ժամկետով, բացառությամբ հղիության, ծննդաբերության և երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդի, պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու, ինչպես նաև վեց ամիսը գերազանցող ժամկետով օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված գործուղման դեպքերի:

Փոխարինող համայնքային ծառայողի կողմից զբաղեցնելու ժամկետի ավարտից հետո կամ փոխարինողի բացակայության կամ 18-րդ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերությունով նախատեսված մյուս դեպքերում ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցվում է համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ հաշվի առնելով օրենքի 11-րդ, 12-րդ հոդվածների, 24-րդ հոդվածի 3-րդ մասի և 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ մեկ այլ անձի հետ ժամկետային աշխատանքայինպայմանագիր կնքելով: Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2006 թվականի հուլիսի 13-ին «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը հաստատելու մասին» N 1002-Ն որոշմամբ հաստատել է ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը:

Համայնքի ղեկավարի կողմից խախտվել է «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարությունը 2006 թվականի հուլիսի 13-ին «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը հաստատելու մասին» N 1002-Ն որոշման պահանջները:

Այսպես՝

- Համայնքի ղեկավարը 2008 թվականի հունվարի 7-ի N 4 կարգադրությամբ աշխատակազմի քարտուղար է նշանակել Համլետ Զախոյանին, առանց պահպանելու սահմանված կարգը և ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու:

-Համայնքի ղեկավարը 2008 թվականի դեկտեմբերի 30-ի N 4 կարգադրությամբ աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 3.1-3) է նշանակել Տաթևիկ Մելոյանին և նրա հետ կնքել է ժամկետային աշխատանքային պայմանագիր, չպահպանելով սահմանված կարգը, ապա անհասկանալի պատճառով 2009 թվականի հունվարի 8-ի N 1 որոշմամբ՝ «Տաթևիկ Մելոյանին ընդունել է աշխատանքի որպես

աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 3.1-3) մինչև թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնելը»:

Հետագայում՝ օրենքով սահմանված կարգով, 2008 թվականի հոկտեմբերի 6-ին կայացած մրցույթում հաղթող է ճանաչվել և արդեն իսկ քարտուղարի զբաղեցրած պաշտոնում նշանակվել է Համլետ Չախոյանը, իսկ 2009 թվականի նոյեմբերի 24-ին կայացած մրցույթում հաղթող ճանաչված Տաթևիկ Մելոյանը՝ աշխատակազմի առաջատար մասնագետի պաշտոնում:

Այս առումով անհրաժեշտ է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հետագայում նման բացթողումները կանխելու ուղղությամբ:

8. ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 30.01.2012թ. «Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության և կադրային գործի վարման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» N 02-Ն հրամանի հավելվածով հաստատված մեթոդական ուղեցույցի «Կադրային գործի վարում» բաժնով նախատեսված կադրային գործի վարման այլ գործընթացներում թերություններ չեն հայտնաբերվել:

Հանձնաժողովի նախագահ՝
Ֆին. և սոց. տնտ. զարգացման
վարչության պետի տեղակալ

---------- Լ. Բերոյան

Լեռնանցք համայնքի ղեկավար

---------- Լ. Աբգարյան

Անդամներ՝

ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչ. ՏԻ և
համայնքային ծառ. հարց. բաժնի պետ

---------- Ժ. Ղազարյան

Լեռնանցքի գյուղապետարանի
աշխատակազմի քարտուղար

---------- Հ. Չախոյան

ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչ. ՀԳՄՏՍ
գործ. համակարգման բաժնի պետ

---------- Վ. Հովհաննիսյան

Հալավարի գյուղապետարանի աշխատա-
կազմի առաջ. մասնագետ՝ հաշվապահ

---------- Ա. Մացակյան

Իրավաբանական բաժնի պետ

---------- Ա. Սահակյան

Հողաշինության և հողօգտագործման
բաժնի պետ

---------- Ռ. Քոչարյան

Ֆին. և սոց. տնտ. զարգ. վարչության
ֆին-տնտ. բաժնի գլխ. մասնագետ

---------- Ա. Բեջանյան

Քաղաքաշինության վարչ. ճարտ-շինարարական
բաժնի գլխավոր մասնագետ

---------- Գ. Հախինյան

Ակտ թիվ 4

23.03.2012թ. **գ. Ձորագյուղ**

Լոռու մարզի համայնքներում 2012թ. վարչական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրի համաձայն(ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2012թ. հունվարի 30-ի թիվ 11-Ա և 2012թ. հունվարի 30-ի 02-ն հրամաններ, ՀՀ Լոռու մարզպետի 2012թ. փետրվարի 13-ի թիվ 48 և 2012թ. թիվ 68 կարգադրությունների), մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ Լ. Բերոյանս (հանձնաժողովի նախագահ), իրավաբանական բաժնի պետ՝ Ա. Սահակյանս, հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ՝ Ռ. Քոչարյանս, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ Ժ. Ղազարյանս, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ Վ. Հովհաննիսյանս, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Ա. Բեջանյանս, քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ՝ Գ. Հախինյանս Ձորագյուղի գյուղապետարանում կատարեցինք վարչական ստուգում: Ստուգումը ընդգրկում է 2009թ. հունվարի 1-ից 2012թ. հունվարի 1-ը ընկած ժամանակաշրջանը: Ստուգման աշխատանքներին մասնակցում էին Ձորագյուղ համայնքի ղեկավար Ռ. Հովսեփյանը, աշխատակազմի քարտուղար՝ Լ. Հովհաննիսյանը, աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ՝ Մ. Սիմոնյանը:

Գյուղապետարանի գործունեությունը կանոնակարգվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ Աշխատանքային օրենսգրքով, գյուղապետարանի կանոնադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով եւ այլ իրավական ակտերով:

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի վերաբերյալ: Բյուջեի սեփական եկամուտներ 2009թ.-ին կատարվել են 57.3%(նախատեսված 7206.2հազ. դրամի դիմաց մուտքը կազմել է 4128.8 հազ. դրամ), 2010թ.-ին՝ 83.2% (նախատեսված 4646.7 հազ. դրամի դիմաց մուտքը կազմել է 3867.1 հազ. դրամ), 2011թ.-ին՝ 99.8% (նախատեսված 4027.1 հազ. դրամի դիմաց մուտքը կազմել է 4019.6 հազ. դրամ):

Համայնքի բյուջեի եկամուտները 2009-2011թվականներին

Բյուջեի եկամուտներ	2009թ.			2010թ.			2011թ.		
	Նախա-տեսված	Փաստա գի	%	Նախա-տեսված	Փաստա գի	%	Նախա-տեսված	Փաստա գի	%
ՎԱՐՉԱԿԱ ԲՅՈՒՋԵ	9980.0	6902.6	69.2	7984.1	7204.5	90.2	6338.6	6231.1	98.3
Հողի հարկ	4801.3	3342.6	69.6	3208.0	3082.5	96.1	3158.1	3335.7	105.6
Գույքահարկ	365.8	197.2	53.9	311.0	278.5	89.5	305.8	187.0	61.2
Տեղական տուրք	56.0	28.0	50.0	56.0	27.0	48.2	36.0	32.0	88.9
Պահուստային հողերի վարձավճար.	1983.1	561.0	28.3	1071.7	479.1	44.7	547.2	384.9	70.3
Այլ մուտքեր	-	-	-				80.0	80.0	100.0
Ընդամենը սեփա-կան եկամուտներ	7206.2	4128.8	57.3	4646.7	3867.1	83.2	4027.1	4019.6	99.8

Պետական բյուջից տրվող դոտացիա	2113.8	2113.8	100.0	2737.4	2737.4	100.0	1911.5	1911.5	100.0
Անասնաբուժական ծառայություն	660.0	660.0	100.0	600.0	600.0	100.0	300.0	300.0	100.0
ՖՈՆԴԱՅԻ ԲՅՈՒՋԵ	250.0	-	-						
Վարչական բյուջեից ֆոնդային հատկաց.	250.0	-	-						
ԸՆԴԱՄԵՆԸ	**9980.0**	**6902.6**	**69.2**	**7984.1**	**7204.5**	**90.2**	**6338.6**	**6231.1**	**98.3**

Սեփական եկամուտների կատարման տոկոսը 2011թ.-ին 2009թ. նկատմամբ ավելացել է, սակայն փաստացի մուտքերը նվազել են 109.2 հազ. դրամով: Սեփական եկամուտներից բոլոր տեսակների գծով հավաքագրումները թերակատարվել են: Բյուջեի պարբերաբար թերակատարման հետևանքով կուտակվել են խոշոր չափերի ապառքներ, այդ թվում՝ հողի հարկից՝ 9967.6 հազ. դրամ, գույքահարկից՝ 2576.1 հազ. դրամ(ներառված են նաև հաշվարկված տույժերը): Համայնքում ցածր է նաև պահուստային հողերի գանձման ցուցանիշը, որի հետևանքով նույնպես կուտակվել են խոշոր չափերի ապառքներ: Արոտի համար հիմնականում վարձակալության պայմանագրեր չեն կնքվում, վարձավճարների չափերը կազմվում են ցուցակային կարգով՝ կախված տվյալ անձին պատկանող անասնագլխաքանակից: Յուրաքանչյուր տարի կատարվում են համապատասխան հաշվարկներ, սակայն գանձումներ հիմնականում արոտավարձերի գծով չեն կատարվում:

Թերակատարվում են նաև վարելահողերի և խոտհարքների վարձավճարների գանձումները: Համայնքի ղեկավարին առաջարկվել է վարձավճարները ժամանակին չմուծելու դեպքում սահմանված կարգով հաշվարկել տույժեր և ապահովել գանձումները:

Դրամարկղային ծախսերը 2009-2011թվականներին

Բյուջետային ծախսեր ըստ տնտեսագիտական դասակարգման	**2009թ**	**2010թ**	**2011թ**
1	2	3	4
Ա. Ընթացիկ ծախսեր	**6794.2**	**7204.3**	**6223.0**
Աշխատավարձեր և հավելավճարներ	4357.5	4816.1	4111.9
Սոցիալական ապահովության վճարներ	1011.4	1084.1	946.7
Էներգետիկ ծառայություններ	75.7	72.7	91.2
Կապի ծառայություններ	79.7	95.2	75.3
Ներքին գործուղումներ	149.2	97.2	60.0
Վարչական ծառայություններ	60.0	30.0	-
Տեղեկատվական ծառայություններ	30.8	44.0	23.0
Գրասենյակային նյութեր	150.0	-	-
Տրանսպորտային նյութեր	250.0	250.0	250.0
Հատուկ նպատակային այլ նյութեր	250.0	200.0	-
Դրամաշնորհներ	-	120.0	360.0
Սոցիալական օգնություններ	360.0	377.0	285.0
Այլ ծախսեր	20.0	20.0	-
Բ. Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	-	**340.0**	-
Վարչական սարքավորումներ	-	340.0	-
Ընդամենը ծախսեր	**6794.3**	**7544.3**	**6223.0**

Դրամարկղային ծախսերը 2011թ.-ին 2009թ. նկատմամբ նվազել է 8.4%-ով, որը պայմանավորված է եկամուտների նվազմամբ: 2010թ. ֆոնդային բյուջեի ծախսը կազմել է 340.0 հազ. դրամ (համակարգիչային տեխնիկայի ձեռք բերում):

Աշխատանքի հաճախումների տաբելներում նախատոնական օրերին նշված են 8 ժամ ներկաներ, կամ խախտվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 147-րդ հոդվածի պահանջը, համաձայն որի ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերի նախօրյակին աշխատանքային օրվա տևողությունը կրճատվում է մեկ ժամով:

Աշխատողներին արձակուրդ տրամադրելու հրամանները կամ կարգադրությունները տրվում են ուշացումներով, արձակուրդային վճարները վճարվում են ուշացումներով, կամ խախտվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը, համաձայն որի ամենամյա արձակուրդային վճարը աշխատողին պետք է վճարել արձակուրդ մեկնելուց առնվազը երեք օր առաջ:

«Վարձատրվող հասարարական աշխատանքներ» ծրագրով համայնքում իրականացվել են տարբեր ծրագրեր: Ծրագրում ընդգրկված աշխատողների հետ կնքվել է ժամկետային պայմանագրեր և համայնքի ղեկավարի մեկ կարգադրությամբ նրանք ցուցակային կարգով ընդունվել և ազատվել են աշխատանքից: Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի աշխատողի աշխատանքի ընդունման և ազատման հրամանները համարվում են անհատական իրավական ակտեր, ուստի յուրաքանչյուր աշխատողի համար պետք է ընդունվի մեկ առանձին իրավական ակտ:

Համաձայն գյուղապետի թիվ 09-Ա կարգադրության 3-րդ կետի համայնքային ծառայողին տրամադրվել է պարգևատրում, սակայն մինչև գումարի վճարումը գյուղապետի որոշմամբ այն չեղյալ է համարվել: Ըստ սահմանված կարգի ընդունված իրավական ակտը անվավեր կարող է համարվել նույնատիպ իրավական ակտով: Նշված դեպքում թիվ 09-Ա կարգադրության 3-րդ կետը կարող է ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի կարգադրությամբ(խախտվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջը):

Աշխատավարձերը հաշվարկվել են համաձայն հաստատված հաստիքացուցակների և դրույքաչափերի: 2011թ. հունիս ամսից Ա. Ավետյանը գտնվել է արձակուրդում, որի մի մասը ընկել է հուլիս ամսվա մեջ, արձակուրդային օրերի ոչ ճիշտ հաշվարկման հետևանքով հուլիսին ավել է հաշվարկվել մեկ օրվա աշխատավարձ, որը կազմում է 1650 դրամ:

Տրանսպորտային ծախսերը հիմնավորելու համար կնքվել է համապատասխան պայմանագիր համայնքի ղեկավարի անձնական մեքենան գյուղապետարանի կարիքների համար օգտագործելու նպատակով: Բենզինի ծախսերը հիմնավորելու նպատակով հաշվապահություն ներկայացվել է երթուղային թերթիկներ: Թերթիկներում նշված են նաև մարզի տարածքից դուրս երթուղիներ, որոնք հիմնավորելու համար նպատակահարմար է տրամադրել գործուղում, նշելով գործուղման վայրը և նպատակը, լրացնել սահմանված կարգի գործուղման թերթիկ, որը կնիքված պետք է լինի նաև գործուղված կազմակերպության կնիքով:

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի տարածքում գործում մեկ մթերային խանութ: 2009-2012թվականների համար սահմանվել է տեղական տուրք եռամսյակային կտրվածքով՝ ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ 5000 դրամ և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ 4000 դրամ: 2009-2011թվականների համար նախատեսված տեղական տուրքի գանձումները թերակատարվել են:

Հանձնաժողովի փաստեց, որ համապատասխան թույլտվությունների համար մուծումները կատարվում են ընթացքում և ոչ թե նախապես եռամյակը սկսվելուց առաջ, կամ խախտվել է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջները. «Տեղական տուրք (կամ) վճար գանձող մարմինների պաշտոնատար անձինք տեղական տուրքի կամ վճարի հաշվարկն իրականացնում և տեղական տուրք կամ վճարը գանձում են նախքան այդ լիազորությունների կամ գործողությունների իրականացումը.. »

Առևտրի և ծառայությունների ոլորտում համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի և «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17.1 հոդվածի չեն իրականացվել համապատասխան հսկողություն: Ընդունված կարգի համաձայն համայնքի ղեկավարը իրավասու է առևտրի օբյեկտներում կատարել ստուգումներ և անօրինական գործունեության համար նշանակել համապատասխան տուգանքներ:

Վաճառքի թույլտվությունների տրման ժամանակ խախտվել է ՀՀ կառավարության 2007թ. հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշման պահանջը՝ չեն ներկայացվել թույլտվության հայտեր, չեն լրացվել սահմանված թույլտվության ձևեր:

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Գոտիավորման սխեմա համայնքը չունի, օգտվում են ժամանակավոր սխեմայից:

Հողամասերի օտարում 2009-2011թթ. չի իրականացվել: Վարձակալությամբ հողամասեր չեն տրվել, որովհետև համայնքը ունի 12 հա վարելահող, որից մինչև 2008թ. պետական գրանցումով վարձակալությամբ տրվել են 11.5 հա, խոտհարքներ՝ 7.6հա-ից տրված է 2.0 հա-ը, իսկ արոտավայրերը վարձակալության տրվել են առանց պայմանագրերի՝ ցուցակով:

Համայնքի ամենամյա հողային հաշվեկշիռը չի լրացվում հողերի հաշվառման գրքում: Համայնքի ղեկավարի կողմից հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ ստուգումներ չեն իրականացվել:

Ապօրինի հողազավթման փաստեր չի արձանագրված՝ ստուգման մատյանի բացակայության պատճառով:

Գեոդեզիական կետերը պահպանվում են: Այլ հողերից վարձակալության չեն տրվել և չեն օտարվել: Մրցույթների և աճուրդների գիրքը 2006թ. մինչ օրս լրացված չէ:

ԱՎԱԳԱՆՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1) Ավագանին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան իր կանոնակարգը ընդունել է 2008թ. դեկտեմբերի 02-ի թիվ 1 որոշմամբ, որոշման հավելվածը գյուղապետարանում առկա չէ, որոշումը չի ուղարկվել ՀՀ արդարադատության նախարարություն: Նորընտիր ավագանու որոշումները համակալված են 1-ին համարից, ինչը չի համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին.

2) 2009 թվականի ապրիլի 18-ի թիվ 13 որոշմամբ հաստատել է համայնքի զարգացման ծրագրը, որոշումը ՀՀ արդարադատության նախարարություն չի ուղարկվել, ծրագիրը գյուղապետարանում առկա չէ.

3) ա/ համայնքի ավագանին 20.01.2009թ. թիվ 11, 27.11.2009թ. թիվ 27, 23.12.2010թ. թիվ 25-Ա և 15.12.2011թ. թիվ 18-Ն որոշումներով սահմանված կարգով հաստատել է 2009, 2010, 2011, 2012թթ. համայնքի բյուջեները: Նշված իրավական

ակտերի բնույթի մասին մի դեպքում նշվել է «Ա», իսկ երկու դեպքում ընդանրապես նշում չի կատարվել, ուստի համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի այս դեպքերում էլ այդ որոշումները համարվում են անհատական, իսկ համայնքի բյուջի հաստատման որոշումը իր բնույթով հանդիսանում է նորմատիվ իրավական ակտ, այսինքն պետք է նշվեր «Ն» տառով.

բ/ հաստատել է բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները: Համայնքի ավագանու 20.01.2009թ. թիվ 11 որոշմամբ հաստատվել է համայնքի 2009թ. բյուջեն, իսկ 20.03.2009թ. թիվ 11 որոշմամբ հաստատվել է 2009թ. բյուջեի փոփոխությունները: Երկու դեպքում էլ որոշումները համարակալվել են 11 թվանշանով.

գ/ հաստատել է բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունները.

4) համայնքի բյուջեի կատարման վերահսկման առումով պետք է նշել, որ համայնքի ավագանուն ներկայացվել է համայնքի բյուջեի կատարման ընթացքի մասին 2009թ. 1-ին և 2-րդ եռամսյակների, 2010թ. 1-ին եռամսյակի հաղորդումները և բյուջեի կատարման ընթացքի մասին չեն ներկայացվել նշված թվականների մյուս եռամսյակների և 2011թ.-ի եռամսյակային հաղորդումները.

5) չի որոշվել կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները.

6) համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ վերահսկողության իրականացման առումով պետք է նշել, որ համայնքի ղեկավարի անհատական ակտերը սահմանված ժամկետում ավագանու անդամներին չեն ուղարկվել և ավագանու նստավայրում չեն փակցվել.

7) համայնքի ղեկավարի որոշումները դատական կարգով չեն վիճարկվել.

8) համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշվել է աշխատակազմի աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին որոշմամբ.

9) 19.08.2010թ. «Համայնքում ՀՈԱԿ նախակրթարան բացելու մասին» թիվ 16-Ա որոշմամբ ստեղծվել է նախակրթարան համայնքային ոչ առևտրային կազմակերպություն.

10) ավագանին իր որոշմամբ համաձայնություն է տվել Սուսաննա Մինասյանին նախակրթարան ՀՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում նշանակելուն.

11) 23.11.2010թ. թիվ 22-Ն որոշմամբ հաստատվել են առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները, որոշումը չի ուղարկվել ՀՀ արդարադատության նախարարություն, որոշման հավելվածը գյուղապետարանում առկա չէ.

12) 02.01.2009թ. թիվ 3, 27.11.2009թ. թիվ 28, 23.12.2010թ. թիվ 24-Ն, 15.12.2011թ. թիվ 16-Ն որոշումներով սահմանվել են 2009, 2010, 2011, 2012թթ. համար տեղական տուրքերի և վճարների տեսակները ու դրույքաչափերը, վերջին երկու որոշումները ուղարկվել են ՀՀ արդարադատության նախարարություն, առաջին երկուսը ոչ: 27.11.2009թ. թիվ 28 որոշման կետերի համարակալումը (3-1, 3-2, 3-3, և այլն) չի համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին: Որոշման 3-6 կետով սահմանվել է «Սույն օրենքի 7-րդ հոդվածի «ժ» ենթակետով նախատեսված թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է» և նախադասությունից չի երևում թե «սույն օրենքը» որ օրենքին է վերաբերվում.

13)համայնքային սեփականություն համարվող շինությունները վարձակալությամբ տրամադրելու համար գանձվում են վճարներ, որոնց

դրույքաչափերը սահմանվել են 2009 և 2010թթ. համար, իսկ 2011 և 2012թթ. համար դրույքաչափեր չեն սահմանվել.

13) համայնքի ղեկավարի առաջարկությամբ համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարելու մասին որոշման կայացում, դրանց վարձավճարների և օտարման գների չափերի և պայմանների, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գների հաստատում.

ա/ 20.01.2009թ. թիվ 2 որոշմամբ սահմանվել է՝ «Համայնքային սեփականություն համարվող հողամասերը 2009թ. ընթացքում վարձակալության տրամադրման վարձավճարների մեկնարկային գները՝ գյուղատնտեսական հողամասերի համար կադաստրային արժեքի նկատմամբ հաշվարկված զուտ եկամտի 15%-ը, անօգտագործելի արտադրական, բնակավայրի և այլ նշանակության հողամասերի համար կադաստրային արժեքի 1%-ը՝ համայնքի ներսում, 0.5%-ը՝ համայնքից դուրս:» Սույն որոշումը նորմատիվ է, սակայն պետական իրավական փորձաքննության չի ուղարկվել և չի հրապարակվել.

14) 20.01.2009թ. թիվ 5, 27.11.2009թ. թիվ 25, 23.12.2010թ. թիվ 26, 12.08.2011թ. թիվ 11-Ա, 15.12.2011թ. թիվ 17-Ա որոշումներով հաստատվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը: 20.01.2009թ. թիվ 5 որոշմամբ սահմանվել է աշխատակիցների թվաքանակը, սակայն թիվը սահմանված չէ: 27.11.2009թ. թիվ 25 որոշման մեջ նույնպես աշխատակիցների թվաքանակը սահմանված չէ, հաստիքացուցակը հաստատվել է համաձայն հավելվածի, բայց ներկայացված է որոշման տեքստի մեջ: Որոշման 2-րդ կետով սահմանվել է՝ «Սույն որոշման 1-ին և 3-րդ կետերն ուժի մեջ են մտնում Զորագյուղ գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից՝ 2010թ. հունվարի 1-ից»: Սակայն այդ որոշմամբ հաստատված համայնքային ծառայության հաստիքները չեն տարբերվում նախկինում հաստատվածից, ինչից կարելի է եզրակացնել, որ պաշտոնների անվանացանկում փոփոխություններ չի կատարվել և որոշման 2-րդ կետը գրվել է սխալմամբ: 23.12.2010թ. թիվ 26-Ա որոշման 2-րդ կետով ուժը կորցրած է՝ ճանաչվել համայնքի ավագանու 2010թ. նոյեմբերի 27-ի «Զորագյուղ համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 24-Ա որոշումը: 2010թ. նոյեմբերին 27-ին ավագանու նիստ չի կայացել, որոշում չի ընդունվել: Իսկ եթե խոսքը գնում է 2009թ. նոյեմբերի 27-ի նիստի մասին, ապա 27.11.2009թ. թիվ 24-Ա որոշումը գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին է: Որոշմամբ պետք է ուժը կորցրած ճանաչվեր 27.11.2009թ. թիվ 25 որոշումը:

15) բնակավայրի քաղաքաշինական կանոնադրություն չի հաստատվել.

16) 27.11.2009թ. թիվ 24, 23.11.2010թ. թիվ 23, 29.11.2011թ. թիվ 15-Ա որոշումներով հաստատվել են համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը.

17) 2009-2011թթ. ընթացքում ավագանու հաստատմանը չի ներկայացվել համայնքի հողային հաշվեկշիռը.

18) 14.04.2011թ. թիվ 7-Ա որոշմամբ հաստատվել է համայնքի հոգաբարձության և խնամակալության հանձնաժողովի կազմը.

19) 06.07.2010թ. թիվ 13-Ա որոշմամբ հաստատվել է ՏԻՄ-երի կողմից քաղաքացիների ընդունելության օրերը, սակայն ընդունելության կարգ չի հաստատվել.

20) երկու անգամ չի ապահովվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերության պահանջը.

21)27.11.2009թ. թիվ 29 որոշմամբ «համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ կետի ավագանու անդամ Սամվել Գաբրիելյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվել են»: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի երկրորդ պարբերության այս դեպքում կազմվում է արձանագրություն, այլ ոչ թե ընդունվում է որոշում:

Մինչև 2009 թվականի ավագանու թիվ 21 որոշումը գյուղապետարանում չկան ավագանու որոշումներ, առկա է միայն արձանագրության գիրքը, որտեղ որոշումները առանձնացված չեն արձանագրության տեքստից և որոշումների տակ չկան ավագանու ստորագրությունները:

30.04.2009թ. ավագանու 5-րդ նիստի ժամանակ ընդունված որոշումների համարները հստակ չեն, նիստի արձանագրությունը ստորագրված չէ: Թիվ 17 և 18 որոշումների համարները գրված են որոշման տեքստից հետո, նույն նիստում որոշում է կայացվել արգելված վայրերում անասունների արածեցման համար տուգանքների չափերի սահմանման մասին, որոշումը համարակալված չէ: Այս նիստից սկսված 2009թ. մյուս որոշումների համարները գրված են որոշման տեքստից հետո:

18.08.2009թ. 8-րդ նիստի արձանագրությամբ ներկայացված քննարկված հարցերը և ընդունված որոշումները չեն համընկնում իրար: Թիվ 21 և թիվ 22 որոշումները Լոռու մարզպետարան են ներկայացվել 18.08.2009թ. ամսաթվով, սակայն ըստ արձանագրության գրքի այդ որոշումները ընդունվել են 7-րդ նիստի ժամանակ՝ 29.06.2009թ.-ին:

02.03.2010թ. թիվ 04-Ա, 02.03.2010թ. թիվ 05-Ա, 30.04.2010թ. թիվ 11, 14.04.2011թ. թիվ 09-Ա որոշումների նախաբաններում հղումները կատարվել են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 31-րդ կետին, ինչը չի բխում կայացրած որոշումների բովանդակությունից:

24.03.2011թ.-ին ավագանու նիստ չի կայացվել սակայն ընդունվել է թիվ 5 որոշումը:

30.05.2011թ. թիվ 10-Ա որոշմամբ համայնքային սեփականություն համարվող հողատարածքը տրամադրվել է ճանապարհի շինարարության համար, իսկ 12.08.2011թ. նույն թիվ 10-Ա որոշմամբ հաստատվել է 2011թ. բյուջեի փոփոխությունները: Այս որոշման մեջ բյուջեի փոփոխությունները հաստատելու փոխարեն հաստատվել է 2011թ. բյուջեի նախագիծը, նույնը արվել է 31.10.2011թ. թիվ 13-Ն որոշման մեջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՅԼ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) Հրավիրվել և վարվել են ավագանու կանոնակարգով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ավագանու նիստեր.

2) համայնքի ղեկավարի անհատական ակտերը ընդունելուց հետո երկօրյա ժամկետում համայնքի ավագանու անդամներին չեն ուղարկվել և համայնքի ավագանու նստավայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում չեն փակցվել.

3) համայնքի զարգացման քառամյա ծրագրը ներկայացվել է ավագանու հաստատմանը.

4)աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացվել են ավագանու հաստատմանը.

5)համայնքի ավագանուն ներկայացրել է առաջարկություն՝ համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու մասին.

6) աշխարհագրական օբյեկտներին տրամադրել են հասցեներ.

7) իր իրավասության շրջանակում ընդունել է որոշումներ և արձակել է կարգադրություններ.

8) կազմակերպել է համայնքի բնակիչների հաշվառումը.

9) իրականացրել է քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է առել քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները և ձեռնարկել է համապատասխան միջոցներ.

10) համայնքի զինապարտների գրանցամատյանը վարվում է:

Գյուղապետարանում առկա է ցուցատախտակ, համայնքի ավագանու որոշումները ցուցատախտակին փակցված չէին:

Գյուղապետարանում առկա է քաղաքացիների դիմումների, բողոքների և առաջարկությունների մտից մատյան; գործադիր, տարածքային կառավարման մարմիններից և կազմակերպություններից ստացված գրությունների մտից մատյան, և կազմակերպություններ ուղարկվող գրությունների ելից մատյան:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՄ

1. ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի « Հասարակությանն իրավական ակտերի մասին իրազեկման և իրավական ակտերի հաշվառման կարգերը հաստատելու մասին» N 1146-Ն որոշման համաձայն իրավական ակտն ընդունող մարմինները պարտավոր են պահել իրենց ընդունած իրավական ակտերի հաշվառման մատյան:

Համայնքի ղեկավարի աշխատակազմում խախտվել է ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման պահանջների կատարումը՝

- համայնքի ավագանու որոշումների հաշվառման մատյանը չի վարվում.
- համայնքի ղեկավարի որոշումների հաշվառման մատյանը սկսել են վարել միայն 2011 թվականի օգոստոսի 9-ից, մատյանում հաշվառված են միայն համայնքի ղեկավարի 2011 թվականի օգոստոսի 9-ից հոկտեմբերի 31-ը ընդունված որոշումները, որից հետո մատյանում գրառումներ չկան.
- համայնքի ղեկավարի կարգադրությունների հաշվառման մատյանը սկսել են վարել միայն 2011 թվականի հոկտեմբերի 1-ից.
- աշխատակազմի քարտուղարի հրամանների հաշվառման մատյանը սկսել են վարել միայն 2011 թվականի հոկտեմբերի 5-ից.

Հաշվառման մատյանները կարված, կնիքված և թերթերը համարակալված չեն, համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների, աշխատակազմի քարտուղարի հրամանների հաշվառման մատյաններում իրավական ակտերի վերաբերյալ գրառումները թերի են լրացվել:

2. ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 16-ի N 197-Ա հրամանի N 58 հավելվածով հաստատված (հետագայում կատարված փոփոխություններով) Զորագյուղի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկի համաձայն՝ աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները 3 -ն են:

Համայնքի ավագանու 15.12.2011թ. N 17-Ա որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը: Հաստատված հաստիքացուցակը համայնքային ծառայության պաշտոնների մասով համապատասխանում է ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի կողմից հաստատված պաշտոնների անվանացանկին:

3. Համայնքի նախկին ղեկավարի 2007 թվականի փետրվարի 8-ի N 9 որոշմամբ հաստատվել են աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը:

Համայնքի նոր ղեկավարը 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 22-Ա որոշմամբ հաստատել է աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների նոր անձնագրերը, սակայն մինչ օրս ուժը կորցրած չի ճանաչել պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին համայնքի ղեկավարի 2007 թվականի փետրվարի 8-ի N 9 որոշումը:

Համադրելով պաշտոնների անձնագրերի բովանդակությունը ՀՀ գործող օրենսդրության պահանջների հետ պարզվեց, որ 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 22-Ա որոշմամբ հաստատված պաշտոնների անձնագրերում «Իրավունքները և պարտականությունները» բաժնում հստակ նկարագրված չեն այն իրավունքները և պարտականությունները, որոնք վերապահված են կոնկրետ պաշտոնը զբաղեցնող համայնքային ծառայողին:

Այս առումով՝ անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2007 թվականի փետրվարի 8-ի N 9 և 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 22-Ա որոշումները և ձեռնարկել միջոցներ գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների պաշտոնների նոր անձնագրերի հաստատման ուղղությամբ :

4. Աշխատակազմի համայնքային ծառայողների անձնական գործերը ընդհանուր առմամբ վարվում են ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 7-ի N 20-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգին համապատասխան, սակայն թերի են լրացված վերգիրները և անձնական թերթիկները (Ձև N 2): Աշխատակազմի համայնքային ծառայողների անձնական գործերում չկար պաշտոնների անձնագրերի պատճենները:

5. «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվում են համապատասխան համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու մինչև հինգ անդամներ և մարզպետարանի երեք ներկայացուցիչ, իսկ նշված հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը որոշում է համայնքի ավագանին:

Ըստ ավագանու նիստերի արձանագրությունների մատյանի՝ 2010 թվականի ապրիլի 10–ին ավագանին N 19 որոշմամբ հաստատել է մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների

քանակական և անհատական կազմերը, որը հիմք ընդունելով համայնքի ղեկավարը 2009 թվականի մայիսի 4-ի N 9 որոշմամբ հաստատել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմը:

Համայնքի ղեկավարի 2011 թվականի փետրվարի 2-ի N 4-Ա որոշմամբ հաստատվել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի նոր կազմը և ուժը կորցրած է ճանաչվել համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի նախորդ կազմը հաստատելու մասին համայնքի ղեկավարի 2009 թվականի մայիսի 4-ի N 9 որոշումը, սակայն, խախտելով ավագանու վերոնշյալ որոշումը, համայնքի ղեկավարը հանձնաժողովի կազմում չի ընդգրկել ավագանու անդամ Համաս Հարությունյանին, իսկ ավագանու անդամ Վանիկ Հովսեփյանի փոխարեն որոշման մեջ նշվել է Վանիկ Հովհաննիսյանը:

Ավելին՝ մինչ օրս ուժը կորցրած չի ճանաչվել նաև համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերը հաստատելու մասին համայնքի ղեկավարի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի N 84 և 2008 թվականի ապրիլի 17-ի N 11 կարգադրությունները:

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը հաստատում են համապատասխան համայնքների ղեկավարները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հաստատած մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերի հիման վրա:

ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 12-Ն հրամանով հաստատվել են համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերը:

Դատելով համայնքի նախկին ղեկավարի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի N 84 և 2008 թվականի ապրիլի 17-ի N 11 կարգադրություններից կարելի է եզրակացնել, որ պետք է հաստատված լինեին համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը, սակայն իրականում վերը նշված կարգադրություններին կցված չեն աշխատակարգերը, այսինքն՝ կարելի է փաստել, որ մրցութային և ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգերը իրականում չեն հաստատվել:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով հաստատել աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմը և մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը (ուժը կորցրած ճանաչելով համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի ձևավորմանը և մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերին վերաբերող համայնքի ղեկավարի նախորդ բոլոր իրավական ակտերը), որից հետո սահմանված ժամկետում հրավիրել հանձնաժողովի աշխատակարգային նիստ, հանձնաժողովի անդամների հետ քննարկել աշխատակարգերը և ընտրել հանձնաժողովի նախագահի տեղակալ, ինչպես նաև նշանակել լիազորված անձ՝ հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար:

6. «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համայնքային ծառայողների միջև ծառայողական փոխհարաբերությունները կարգավորվում են նաև աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգով, որը հաստատում են համապատասխան

համայնքների ղեկավարները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հաստատած օրինակելի կանոնակարգի հիման վրա:

Համայնքների ղեկավարների աշխատակազմերի աշխատանքային կարգապահական ներքին օրինակելի կանոնակարգը հաստատվել է ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի հունվարի 19-ի N 03-Ն հրամանով, իսկ ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2010 թվականի օգոստոսի 9-ի N 09-Ն հրամանով փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի հունվարի 19-ի N 03-Ն հրամանով հաստատված աշխատանքային կարգապահական ներքին օրինակելի կանոնակարգում:

Պետք է նշել, որ համայնքի ղեկավարը խախտել է «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի հունվարի 19-ի N 03-Ն հրամանի պահանջները և մինչև վարչական ստուգում անցկացնելը չի հաստատել աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը:

Այս առումով անհրաժեշտ է հաստատել աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը և ձեռնարկել միջոցներ աշխատակազմի ներքին կարգապահական կանոնակարգը աշխատակազմի աշխատակիցներին պատշաճ իրազեկումն ապահովելու ուղղությամբ:

7. ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին» N 13-Ն հրամանով հաստատված կարգի 16-րդ կետով նախատեսված է, որ համայնքների ղեկավարների աշխատակազմերում պետք է վարվի համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթներին մասնակցելու համար դիմած քաղաքացիների տվյալների գրառման համարակալված մատյան, ինչը աշխատակազմում բացակայում էր:

Աշխատակազմում վարվում է համայնքային ծառայողների վերապատրաստման հաշվառման մատյան, ինչպես նաև համայնքային ծառայողների անձնական գործերի հաշվառման մատյան, սակայն դրանք թերի են լրացվել:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է աշխատակազմում ստեղծել համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթներին մասնակցելու համար դիմած քաղաքացիների տվյալների գրառման համարակալված մատյան և սահմանված կարգով վարել համայնքային ծառայողների վերապատրաստման հաշվառման և անձնական գործերի հաշվառման մատյանները:

8. ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին» N 13-Ն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետով նախատեսված է, որ համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթն անցկացնելու մասին որոշումն ընդունում է համապատասխան համայնքի ղեկավարը և ապահովում է այդ մասին հայտարարության հրապարակումը, ինչպես նաև մրցույթն անցկացնելու մասին

որոշումն ընդունելուց հետո երկօրյա ժամկետում այդ մասին պատշաճ տեղեկացնում է համապատասխան մարզպետարանի աշխատակազմին:

Վերոնշյալի առումով՝ համայնքի ղեկավարը խախտել է ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 13-Ն հրամանով հաստատված կարգի պահանջները և 2009 թվականին աշխատակազմի քարտուղարի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին համայնքի ղեկավարը որոշում չի ընդունել:

Այս առումով անհրաժեշտ է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հետագայում նման բացթողումը կանխելու ուղղությամբ:

9. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը հաստատելու մասին» N 1002-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը համայնքային ծառայության պաշտոնը համարվում է ժամանակավոր թափուր: Այս դեպքում, ըստ վերոնշյալ որոշմամբ հաստատված կարգի, ժամանակավոր թափուր պաշտոնը տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող՝ կադրերի ռեզերվում գրանցված անձի, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձի կողմից կարող է զբաղեցվել՝ տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից՝ նրա հետ պայմանագիր կնքելով: Այս դեպքում՝ եռօրյա ժամկետում, տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը գրավոր դիմում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին (այսուհետ՝ լիազորված մարմին)՝ տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող՝ սահմանված կարգով նախապատվություն ստացած՝ կադրերի ռեզերվում գրանցված անձի մասին տեղեկություններ ստանալու և նրա հետ պայմանագիր կնքելու համար:

Տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող՝ կադրերի ռեզերվում գրանցված անձի կողմից դիմում չներկայացվելու կամ դիմում ներկայացրած՝ կադրերի ռեզերվում գրանցված անձի կողմից տվյալ պաշտոնի անձնագրի պահանջների չբավարարման դեպքում լիազորված մարմինը դրա մասին աշխատանքային երեք օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին:

Այս տեղեկությունն ստանալուց հետո աշխատանքային 7 օրվա ընթացքում համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարող է տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող այլ անձի հետ կնքել պայմանագիր:

Պայմանագիրը լուծվում է համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու հիմքի վերացման դեպքում՝ անկախ պայմանագրի գործողության ժամկետից:

Համայնքի նախկին և ներկայիս ղեկավարները խախտել են ՀՀ կառավարության 1002-Ն որոշմամբ հաստատված կարգը:

01.10.2007թ. N 3 հրամանով Լվիկտորյա Հովհաննիսյանը ազատվել է քարտուղարի պաշտոնից և համայնքի ղեկավարը նրա հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելով նշանակել է 2–րդ կարգի մասնագետի ժամանակավոր թափուր պաշտոնում, հետագայում 23.01.2009թ. N 1 կարգադրությամբ նրան ազատել է 2–րդ կարգի մասնագետի պաշտոնից և

ժամկետային աշխատանքային պայմանագրով նշանակել է աշխատակազմի քարտուղար: Լվիկտորյա Հովհաննիսյանը աշխատակազմում չի աշխատում 2009թ. մայիսի 8-ից:

18.12.2008թ. N 2 կարգադրությամբ համայնքի ղեկավարը 3 ամիս ժամկետով Նարա Խաչատրյանին աշխատանքային պայմանագրով նշանակել է աշխատակազմի 2–րդ կարգի մասնագետի ժամանակավոր թափուր պաշտոնում: Նարա Խաչատրյանը 2–րդ կարգի մասնագետի ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցրել է ավելի քան 6 ամիս:

Վերոնշյալ դեպքերում համայնքի ղեկավարը չի դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին՝ տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող՝ սահմանված կարգով նախապատվություն ստացած՝ կադրերի ռեզերվում գրանցված անձի մասին տեղեկություններ ստանալու և նրա հետ պայմանագիր կնքելու համար:

Իրենց այս գործունեությամբ համայնքի նախկին և ներկայիս ղեկավարները խախտել են նաև «Տեղական ինքնակառավարման մասին» և «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքները:

10. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ կետի 9-րդ մասի և «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն համայնքային ծառայողների (բացառությամբ՝ գլխավոր խմբի և առաջատար պաշտոնների առաջին ենթախմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների) նկատմամբ խրախուսման միջոցներ կիրառելու իրավասություն ունի նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը՝ այս դեպքերում աշխատակազմի քարտուղարը:

Սակայն համայնքի ղեկավարը խախտելով վերոնշյալ օրենքների պահանջները, 14.05.2010թ. N 17-Ա, 02.08.2010թ. N 10, 30.08.2011թ. N 24 կարգադրություններով աշխատակազմի կրտսեր պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների նկատմամբ ինքն է կիրառել խրախուսման միջոցները՝ նրանց հատկացնելով միանվագ դրամական պարգևատրումներ:

11. ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի սեպտեմբերի 11-ի «Համայնքային ծառայողի ատեստավորման կարգը սահմանելու մասին» N 15-Ն հրամանով հաստատված կարգի 14-րդ կետով նախատեսված է, որ ատեստավորման ենթակա համայնքային ծառայողները ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ տեղեկացվում են ատեստավորման մասին:

Համայնքի ղեկավարը խախտելով վերոնշյալ հրամանի պահանջը 14.10.2009թ. N 17 որոշմամբ՝ առաջատար մասնագետ Մարիամ Սիմոնյանի և 2–րդ կարգի մասնագետ Անահիտ Ավետյանի ատեստավորումը նշանակել է 2009թ. նոյեմբերի 2-ին:

Այս առումով անհրաժեշտ է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հետագայում նման բացթողումը կանխելու ուղղությամբ:

12. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարը իր իրավասության շրջանակում ընդունում է որոշումներ, կազմում է արձանագրություններ և արձակում կարգադրություններ, իսկ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարը կարող է ընդունել միայն նորմատիվ կամ անհատական իրավական ակտեր, սակայն մինչև 2008 թվականը համայնքի նախկին ղեկավարի կողմից ընդունվել են նաև հրամաններ և վարվել է հրամանագիրք:

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն համայնքային ծառայող համարված համայնքների ղեկավարների աշխատակազմերի աշխատողներին ծառայության առաջին համապատասխան դասային աստիճանները շնորհվում է «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված առաջին ատեստավորումից հետո:

Համայնքի նախկին ղեկավարը խախտելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքը առանց առաջին ատեստավորման 2007թ. փետրվարի 8-ի N 1 հրամանի 2 –րդ կետով աշխատակազմի համայնքային ծառայողներին շնորհել է օրենքով չնախատեսված դասային աստիճաններ:

Այս առումով՝ անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով չեղյալ ճանաչել համայնքի ղեկավարի 2007 թվականի փետրվարի 8-ի N 1 հրամանի 2 –րդ կետը:

Հանձնաժողովի նախագահ՝
Ֆին. և սոց. տնտ. զարգացման
վարչության պետի տեղակալ

Լ. Բերոյան

Զորագյուղ համայնքի ղեկավար

Ռ. Հովսեփյան

Անդամներ՝

ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչ. ՏԻ և
համայնքային ծառ. հարց. բաժնի պետ

Ժ. Ղազարյան

Զորագյուղի գյուղապետարանի
աշխատակազմի քարտուղար

Լ. Հովհաննիսյան

ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչ. ՀԳՄՏՍ
գործ. համակարգման բաժնի պետ

Վ. Հովհաննիսյան

Զորագյուղի գյուղապետարանի աշխատա-
կազմի առաջ. մասնագետ՝ հաշվապահ

Մ. Սիմոնյան

Իրավաբանական բաժնի պետ

Ա. Սահակյան

Հողաշինության և հողօգտագործման
բաժնի պետ

Ռ. Քոչարյան

Ֆին. և սոց. տնտ. զարգ. վարչության
ֆին-տնտ. բաժնի գլխ. մասնագետ

Ա. Բեջանյան

Քաղաքաշինության վարչ. ճարտ-շինարարական
բաժնի գլխավոր մասնագետ

Գ. Հախինյան

Ակտ թիվ 5

26.03.2012թ. **գ.Դեբեդ**

Լոռու մարզի համայնքներում 2012թ. վարչական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրի համաձայն(ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2012թ. հունվարի 30-ի թիվ 11-Ա և 2012թ. հունվարի 30-ի 02-ն հրամաններ, ՀՀ Լոռու մարզպետի 2012թ. փետրվարի 13-ի թիվ 48 և 2012թ. մարտի 14-ի թիվ 91 կարգադրությունների), մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ Լ. Բերոյանս(հանձնաժողովի նախագահ), իրավաբանական բաժնի պետ՝ Ա. Սահակյանս, հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ՝ Ռ. Քոչարյանս, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ Ժ. Ղազարյանս, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ Վ. Հովհաննիսյանս, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Ա. Բեջանյանս, քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ՝ Գ. Հախինյանս Դեբեդի գյուղապետարանում կատարեցինք վարչական ստուգում: Ստուգումը ընդգրկում է 2009թ. հունվարի 1-ից 2012թ. հունվարի 1-ը ընկած ժամանակաշրջանը: Ստուգման աշխատանքներին մասնակցում էին Դեբեդ համայնքի ղեկավար Կ. Պետրոսյանը(աշխատում է 2010թ. մարտի 18-ից), աշխատակազմի քարտուղար՝ Ս. Պետրոսյանը, աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ՝ Ս. Վիրաբյանը:

Գյուղապետարանի գործունեությունը կանոնակարգվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ Աշխատանքային օրենսգրքով, գյուղապետարանի կանոնադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով:

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի վերաբերյալ: Բյուջեի սեփական եկամուտներ նախատեսված են 2009թ.-ին 4242.6 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 2228.5 հազ. դրամ (52.5%), 2010թ.-ին՝ 2583.4 հազ. դրամի դիմաց՝ 2731.4 հազ. դրամ (105.7%), 2011թ.-ին՝ 2553.1 հազ դրամի դիմաց՝ 2732.4 հազ. դրամ(107.0%): Սեփական եկամուտներից մուտքերը 2011թ.-ին 2009թ. նկատմամբ ավելացել են 503.9 հազ. դրամով: Սեփական եկամուտներից հիմնականում թերակատարվել են գույքահարկի տեղական տուրքերի գանձման ցուցանիշները: Առանձին դեպքերում թերակատարվել է նաև հողի հարկի և պահուստային հողերի վարձակալության վճարների գծով գանձումները:

Համայնքի բյուջեի եկամուտները 2009-2011թվականներին

Բյուջեի եկամուտներ	2009թ.			2010թ.			2011թ.		
	Նախա-տեսված	Փաստա ցի	%	Նախա-տեսված	Փաստա ցի	%	Նախա-տեսված	Փաստա ցի	%
ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	13429.8	11415.7	85.0	13828.0	13976.0	101.1	13748.2	13927.5	101.3
Հողի հարկ	2235.6	1754.6	78.5	1620.5	2088.4	128.9	1569.5	1771.0	112.8
Գույքահարկ	447.0	96.1	21.5	387.3	225.9	58.3	383.5	296.3	77.3

Տեղական տուրք*	20.0	-	-	20.0	-	-	20.0	-	-
Պահուստային հողերի վարձավճար.	1540.0	246.7	16.0	555.6	199.8	36.0	440.5	485.5	110.2
Այլ մուտքեր	-	131.1	-	-	217.3	-	139.6	179.6	128.7
Ընդամենը սեփական եկամուտներ	**4242.6**	**2228.5**	**52.5**	**2583.4**	**2731.4**	**105.7**	**2553.1**	**2732.4**	**107.0**
Պետական բյուջից տրվող դոտացիա	8527.2	8527.2	100.0	10644.6	10644.4	100.0	10895.1	10895.1	100.0
Անասնաբուժական ծառայություն	660.0	660.0	100.0	600.0	600.0	100.0	300.0	300.0	100.0
ՖՈՆԴԱՅԻ ԲՅՈՒՋԵ							**400.0**	**400.0**	**100.0**
Այլ մուտքեր							400.0	400.0	100.0
ԸՆԴԱՄԵՆԸ	**13429.8**	**11415.7**	**85.0**	**13828.0**	**13975.8**	**101.1**	**14148.2**	**14327.5**	**101.3**

* Համայնքի բյուջեով նախատեսված է գանձել տեղական տուրք տարեկան 20.0 հազ. դրամ, այն դեպքում, երբ մեկ տարվա հաշվարկը կազմում է 72.0 հազ. դրամ: Տեղական տուրքեր տնտեսվարող սուբյեկտներից հիմնականում գանձվել են, սակայն մուծվել են բանկ որպես հողի հարկ:

Եթե պետական բյուջեից նախատեսվող եկամուտների գծով մուտքերը կատարվել են 100%-ով, ապա նույնը չի կարելի ասել սեփական եկամուտների հավաքագրման վերաբերյալ: Բոլոր եկամտատեսակների գծով գանձումները տարբեր տարիներ թերակատարվել են, ինչի հետևանքով կուտակվել են ապառքներ: Տույժ և տուգանքներով ապառքները կազմել են հողի հարկից՝ 12060.6 հազ. դրամ, գույքահարկից՝ 367.8 հազ. դրամ:

Դրամարկղային ծախսերը 2009-2011թվականներին

Բյուջետային ծախսեր ըստ տնտեսագիտական դասակարգման	**2009թ**	**2010թ**	**2011թ**
1	2	3	4
Ա. Ընթացիկ ծախսեր	**11355.7**	**11627.9**	**12574.0**
Աշխատավարձեր և հավելավճարներ	8428.0	7670.5	6840.0
Սոցիալական ապահովության վճարներ	1824.6	1801.7	1603.4
Էներգետիկ ծառայություններ	313.1	426.3	389.1
Կապի ծառայություններ	148.1	114.7	120.7
Դրամաշնորհներ	-	-	1419.8
Ներքին գործուղումներ	4.9	80.7	104.6
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	-	300.0	600.0
Վարչական ծառայություններ	19.0	50.0	87.0
Համակարգչային ծառայություններ	-		35.0
Տեղեկատվական ծառայություններ	23.0	76.0	34.8
Մասնագիտական ծառայություններ	20.0	50.0	49.0
Ընթացիկ նորոգումներ	-	-	18.0
Գրասենյակային նյութեր	-	68.0	100.6
Հատուկ նպատակային այլ նյութեր	-		80.0
Կենցաղային հանրային սննդի նյութեր	275.0	470.0	200.0
Սոցիալական օգնություններ	300.0	500.0	770.0
Այլ ծախսեր		20.0	122.0
Բ. Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	**1397.0**	**348.0**	**486.5**
Շենք և շինությունների կառուցում			90.0
Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	1397.0	348.0	396.5
Ընդամենը ծախսեր	**12752.7**	**11975.9**	**13060.5**

Դրամարկղային ծախսերը 2011թ.-ին 2009թ. նկատմամբ աճել են 12.4%-ով, այդ թվում՝ ընթացիկ ծախսեր՝ 10.7%-ով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր (կապիտալ) նվազել է՝ 65.2%-ով:

Հաշվապահական հաշվառման և դրամարկղային գործառնությունների վարման վերաբերյալ: Հաշվապահական հաշվառումը չի կազմակերպվել և վարվել «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի և այն կարգավորող իրավական ակտերի դրույթներին ու պահանջներին համապատասխան:

Գանձապահի հետ չի կնքվել պայմանագիրը՝ նյութական պատասխանատվության և իրեն հանձնված դրամական միջոցների պահպանման վերաբերյալ: Դրամարկղի գիրքը լրացվում է թերություններով և բացթողումներով, դրամարկղային գրքում չեն լրացվել վճարման ցուցակների համարները, թղթակցող հաշիվները:

Դրամարկղի մուտքի անդորրագրերով հավաքագրված պահուստային հողերի վարձավճարները և տեղական տուրքերը առանց դրամարկղ մուտքագրվելու մուծվել են բանկ: Խախտվել է «Դրամարկղային գործառությունների մասին» ՀՀ օրենքի պահանջները, որի համար սույն օրենքով սահմանված է համապատասխան տույժ և տուգանքներ:

Հողի հարկի և գույքահարկի գանձումները նույնպես կատարվում է գյուղապետարանի աշխատակազմի կողմից: Օգտագործված անդորրագրերի և գանձված ու մուծված գումարների նկատմամբ հսկողությունը իրականացվում է ոչ սահմանված կարգով: Խախտվել է ՀՀ կառավարության 29.05.2003թ.-ի թիվ 750-Ն որոշման պահանջները, որը հստակ սահմանում է անդորրագրերի հաշվառման, գումարների գանձման և մուծման գործընթացները:

Գանձված գումարները պետք է մուծվեն բանկ 5 օրվա ընթացքում, սակայն որոշ դեպքերում մուծվում են ուշացումներով: Ոչ ճիշտ վերահսկողության և աշխատանքների կազմակերպման հետևանքով գանձված պահուստային հողերի և տեղական տուրքերի մի մասը մուծվել է որպես հողի հարկ: Ընդունված կարգի համաձայն համակարգողը պարտավոր է հավաքագրված գումարները առանձնացնել ըստ հարկատեսակների և դրանք մուտքագրել համայնքն սպասարկող ՏԳԲ-ի համապատասխան գանձապետական հաշվին:

Տրանսպորտային ծախսեր, գործուղումների տրամադրման և գործուղման գումարների հաշվարկման վերաբերյալ: Համայնքը հաշվեկշռում չունի տրանսպորտային միջոցներ և համայնքի ղեկավարը պայմանագիր է կնքել քաղաքացի Ս. Նազլուխանյանի հետ, համաձայն որի Ս. Նազլուխանյանը իր անձնական «Վազ 2121» մակնիշի ավտոմեքենան պարտավորվում է անհրաժեշտության դեպքում ծառայողական նպատակով տրամադրել գյուղապետարանին, որի համար համայնքի բյուջեից տարեկան ծախսվում է 600.0 հազ. դրամ: Պայմանագիրը կազմված է թերություններով՝ չունի հերթական համար և չի նշված ժամկետները: Բացի պայմանագրից, նշված ծախսը հիմնավորելու համար այլ փաստաթուղթ չի ներկայացվել:

Գործուղման տրամադրելու վերաբերյալ տրված կարգադրություններում և հրամաններում հստակ չեն նշվում գործուղման նպատակը: Առանձին դեպքերում հաշվարկները կատարվել են ոչ սահմանված կարգով: 2011թ. երկու դեպքում տրվել է մեկ օրով գործուղում, որի համար անհիմն վճարվել է նաև 4000 դրամ օրապահիկի գումար(յուրաքանչյուր անգամ ավել է տրվել 2000 դրամ), կամ խախտվել է ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2335-Ն որոշման պահանջը, համաձայն որի պետք է վճարել միայն ճանապարհածախս:

Որոշ դեպքերում գործուղման կարգադրություններում չի նշվում գործուղում մեկնելու օրը և օրերի քանակը, սակայն հաշվարկները կատարվում են գործուղման

թերթիկում նշված օրերի քանակով: Ընդունված կարգի համաձայն իրավական ակտում հստակ պետք է նշել մեկնման օրը և տրամադրվող օրերի քանակը:

Համայնքի ղեկավար Կ. Պետրոսյանը համաձայն հրամանի 2 օրով գործուղվել է Ջերմուկ քաղաք, սակայն գործուղման գումարների հաշվարկները կատարվել են ոչ սահմանված կարգով, կամ ավել է հաշվարկվել 10400 դրամ (2-օրվա փոխարեն հաշվարկվել է 4 օրվա գործուղում):

Արձակուրդների տրամադրման և աշխատավարձերի, արձակուրդային վճարների և անաշխատունակության նպաստների հաշվարկման վերաբերյալ: Աշխատողներին արձակուրդ տրամադրելու հրամանները կամ կարգադրությունները տրվում են ուշացումներով, արձակուրդային վճարները վճարվում են ուշացումներով, կամ խախտվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը, համաձայն որի ամենամյա արձակուրդային վճարը աշխատողին պետք է վճարել արձակուրդ մեկնելուց առնվազը երեք օր առաջ:

Առանց հաստիքացուցակում նախատեսելու, 2009թ. հուլիսի 1-ից մինչև 2010թ. մարտի 1-ը որպես բանվոր աշխատանքի է ընդունվել Աշոտ Նազլուխանյանը, ամսական աշխատավարձի չափը 30000 դրամ, իսկ 2011թ. հուլիսի 1-ից սեպտեմբերի 30-ը, որպես բանվոր աշխատանքի է ընդունվել Արամ Սարգսյանին, ամսական աշխատավարձի չափը 45000 դրամ: Ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակներում նման հաստիք նախատեսված չէ, ուստի համայնքի ղեկավարը բանվոր ընդունելու համար պետք է առաջարկեր համայնքի ավագանուն հաստիքացուցակներում և համայնքի բյուջեում կատարել համապատասխան փոփոխություններ: Առանց հաստիքացուցակներում նախատեսելու 8 ամիս և երեք ամիս ժամկետներով աշխատողի աշխատանքի ընդունումը հիմնավոր չէ: Նշված պայմանագիրը չի համարվում ժամանակավոր, քանի որ համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 101-րդ հոդվածի ժամանակավոր աշխատանքային պայմանագիրը մինչև երկու ամիս ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագիրն է:

Նշված խախտումների հետևանքով համայնքի բյուջեից լրացուցիչ 2009-2011թթ.-ին հաշվարկվել և վճարվել է 375.0 հազ. դրամ աշխատավարձ (30000դրամ x 8ամիս + 45000դրամ x 3ամիս = 375000 դրամ):

Ա. Նազլուխանյանը 2010թ. մարտի 1-ից ազատվել է աշխատանքից, վերջնահաշվարկը կատարվել է սխալ, որի հետևանքով ավելի է վճարվել 1974 դրամ:

Ժամանակավոր թափուր պաշտոնում 2011թ. հուլիսի 1-ից հոկտեմբերի 19-ը ժամկետային պայմանագրով աշխատանքի է ընդունվել Նարինե Նազլուխանյանը, որը աշխատում է նաև Դեբեդի միջնակարգ դպրոցում որպես մանկավարժ: Նշված դեպքում նրա համար գյուղապետարանի աշխատանքը համարվում է համատեղությամբ աշխատանք, սակայն աշխատանքի ընդունման հրամանում և պայմանագրում համատեղության վերաբերյալ նշումներ չեն կատարվել: Աշխատողը համատեղությամբ աշխատանք կարող է կատարել իր հիմնական ժամանակից դուրս:

2010թ. մայիսի 17-ին մրցույթով աշխատանքի է ընդունվել Ք. Պողոսյանը, որը 2010թ. հունիսի 17-ից մեկնել է հղիության և ծննդաբերության արձակուրդ՝ 140 օր: Նպաստը հաշվարկվել է սխալ՝ միջին աշխատավարձը 39000 դրամի փոխարեն վերցվել է 20386 դրամ, ինչի հետևանքով պակաս է հաշվարկվել՝ 85665 դրամ:

Ք. Պողոսյանը 2010թ. հունիսի 17-ից նոյեմբերի 3-ը գտնվել է հղիության և ծննդաբերության արձակուրդում, նրա փոխարեն ժամանակավոր թափուր տեղի համար ժամկետային պայմանագրով աշխատանքի է ընդունվել Ա. Սարգսյանը: Համաձայն աշխատանքի ընդունման հրամանի Ա. Սարգսյանը ընդունվել է աշխատանքի մինչև դեկտեմբերի 1-ը, սակայն պետք է նշվեր նոյեմբերի 3-ը, քանի որ Ք. Պողոսյանի արձակուրդի ժամկետը լրանում է նոյեմբերի 3-ին: Ք. Պողոսյանը աշխատանքի է անցել 2010թ. դեկտեմբերի 1-ից և նույն օրով ժամանակավոր աշխատող Ա. Սարգսյանը պետք է ազատվեր աշխատանքից, սակայն Ա. Սարգսյանը դեկտեմբերի 1-ից չի ազատվել աշխատանքից, այլ մեկնել է հղիության և ծննդաբերության արձակուրդ, որի համար հաշվարկվել և վճարվել է 179620 հղիության և ծննդաբերության նպաստ: 2011թ. մայիսի 2-ից համաձայն համայնքի ղեկավարի թիվ 4 կարգադրության Ա. Սարգսյանին տրամադրվել է մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդը, որի ընթացքում պետական բյուջեից որպես աշխատող յուրաքանչյուր ամիս վճարվում է 18000 դրամ: Խախտվել է նաև «Ժամանակավոր անաշխատունակության մասին» ՀՀ օրենքի հոդված 16-ի կետ 2-ի պահանջը, համաձայն որի «Որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրով վարձու աշխատողին նպաստը հաշվարկվում և վճարվում է սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում, բայց ոչ ավելի, քան մինչև աշխատանքային պայմանագրի ժամկետի ավարտը»: Նշված դեպքում պայմանագրի ժամկետի ավարտ է համարվում(համաձայն աշխատանքի ընդունման հրամանի) 2010թ. դեկտեմբերի 1-ը:

Ֆոնդային բյուջեով կատարված ծախսերի վերաբերյալ: 2009թ.-ին համաձայն կնքված պայմանագրի և հաշիվ ապրանքագրի «Զոսեկար» ՍՊԸ-ից գյուղապետարանի շենքի համար ձեռք է բերվել 4.37 քմ դուռ՝ 400.0 հազ. դրամ արժեքով: Փաստացի ստուգմամբ պարզվեց, որ գյուղապետարանի շենքում նոր դռներ չեն տեղադրված: Ծախսը կատարվել է նախկին համայնքի ղեկավարի աշխատած ժամանակաշրջանում և 2011թվականին նրա կողմից որպես հայմայնքին պատճառված վնասի փոխհատուցում վերականգնվել է նշված 400.0 հազ. դրամը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին ոչ համապատասխան ճանապարհների վերանորոգման շինարարական աշխատանքներ կատարելու համար(փոսերի լցում, խճապատում) 2009թ. վճարովի ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքվել «Լ. Մեսրոպյան և ընկերներ» ՍՊԸ-ի հետ, պայմանագրի գին նախատեսված է 997.0 հազ. դրամ: 2010թվականին նույնպես «Լ. Մեսրոպյան և ընկերներ» ՍՊԸ-ի հետ կնքվել է պայմանագիր միջհամայնքային ճանապարհների վերանորոգման համար՝ 348.0 հազ. դրամ պայմանագրային գումարով (առկա է 01.11.2010թ. թիվ 10 առուծախի մասին պայմանագիրը և 30.12.2010թ. կատարված շինմոնտաժային ընթացիկ վերանորոգման աշխատանքների ընդունման ակտը): Վերը նշված ընկերությունը չունի շինարարական աշխատանքներ կատարելու համապատասխան լիցենզիա, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ և այլն: Բացակայում են պայմանագրին կից անհրաժեշտ փաստաթղթերը՝ նախագծա-նախահաշվային փաստաթղթեր, ծախսերի նախահաշիվներ, աշխատանքների կատարման և վճարման ժամանակացույցեր, որակավորման փաստաթղթեր և այլն: Աշխատանքների կատարման հիմնավորման համար հաշվապահությունում այլ փաստաթղթեր չեն ներկայացվել, բացակայում է սահմանված կարգով կազմած կատարողական ակտերը, տեխնիկական հսկողության փաստաթղթերը և այլն: Առկա

պայմանագրերում և փաստաթղթերում հստակ նշված չէ թե կոնկրետ որտեղ և ինչ աշխատանքներ պետք է կատարվեն, ուստի 2012թ. մարտ ամսին անհնար է փաստացի ստուգել 2009թ. և 2010թ. կատարված ճանապարհների վերանորոգման աշխատանքները (խճով և հողով փոսային լցումներ):

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի տարածքում գործում են երեք մթերային խանութներ, որոնց համար 2009թ. 2010թ. 2011թ և 2012թ. տեղական տուրք է սահմանվել ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար, եռամսյակը՝ 4000դրամ և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, եռամսյակը՝ 2000 դրամ: 2011թ. համար նախատեսված տեղական տուրքը երեք տնտեսավարող սուբյեկտներից ամբողջությամբ գանձվել է:

Համապատասխան թույլտվությունների համար տեղական տուրքի մուծումները կատարվում են ընթացքում և ոչ թե նախապես՝ եռամսյակը սկսվելուց առաջ, կամ խախտվել է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջները. «Տեղական տուրք (կամ) վճար գանձող մարմինների պաշտոնատար անձինք տեղական տուրքի կամ վճարի հաշվարկն իրականացնում և տեղական տուրք կամ վճարը գանձում են նախքան այդ լիազորությունների կամ գործողությունների իրականացումը.. »

Առևտրի և ծառայությունների ոլորտում համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի և «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17.1 հոդվածի չեն իրականացվել համապատասխան հսկողություն: Ընդունված կարգի համաձայն համայնքի ղեկավարը իրավասու է առևտրի օբյեկտներում կատարել ստուգումներ և անօրինական գործունեության համար նշանակել համապատասխան տուգանքներ:

Վաճառքի թույլտվությունների տրման ժամանակ խախտվել է ՀՀ կառավարության 2007թ. հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշման պահանջը՝ չեն ներկայացվել թույլտվության հայտեր, չեն լրացվել սահմանված թույլտվության ձևեր:

ԱՎԱԳԱՆՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1) Ավագանին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան իր կանոնակարգը ընդունել է 2008թ. նոյեմբերի 24-ի թիվ 21 որոշմամբ, որոշումը չի ուղարկվել ՀՀ արդարադատության նախարարություն.

2) 2009 թվականի մարտի 20-ի թիվ 13 որոշմամբ հաստատել է համայնքի զարգացման ծրագրը, որոշումը ՀՀ արդարադատության նախարարություն չի ուղարկվել, որոշման նախաբանում հիմք է ընդունվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետը, պետք է հղում կատարվեր «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետին.

3) ա/ համայնքի ավագանին 03.02.2009թ. թիվ 1*, 18.12.2009թ. թիվ 26, 22.12.2010թ. թիվ 24 և 14.12.2011թ. թիվ 30-Ն որոշումներով սահմանված կարգով հաստատել է 2009, 2010, 2011, 2012թթ. համայնքի բյուջեները: Նշված իրավական ակտերի բնույթի մասին մի դեպքում նշվել է «Ա», իսկ երկու դեպքում ընդհանրապես նշում չի կատարվել, ուստի համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի այս դեպքերում էլ այդ որոշումները համարվում են անհատական, իսկ համայնքի

բյուջի հաստատման որոշումը իր բնույթով հանդիսանում է նորմատիվ իրավական ակտ, այսինքն պետք է նշվեր «Ն» տառով.

բ/ հաստատել է բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները.

գ/ հաստատվել է բյուջեների կատարման միայն 2010թ. տարեկան հաշվետվությունը, 2008թ. և 2009թ. բյուջեների կատարման տարեկան հաշվետվություններ չեն հաստատվել.

4) համայնքի բյուջեի կատարման վերահսկման առումով պետք է նշել, որ համայնքի ավագանուն ներկայացվել է համայնքի բյուջեի կատարման ընթացքի մասին 2011թ. 1-ին կիսամյակի հաղորդումը և բյուջեի կատարման ընթացքի մասին չեն ներկայացվել 2009, 2010թվականների և 2011թվականի մնացած եռամսյակների եռամսյակային հաղորդումները.

5) չի որոշվել կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները.

6) համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ վերահսկողության իրականացման առումով պետք է նշել, որ համայնքի ղեկավարի անհատական ակտերը սահմանված ժամկետում ավագանու անդամներին չեն ուղարկվել և ավագանու նստավայրում չեն փակցվել.

7) համայնքի ղեկավարի որոշումները դատական կարգով չեն վիճարկվել.

8) համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշվել է աշխատակազմի աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին որոշմամբ.

9) ա/ 20.07.2009թ. թիվ 22 որոշմամբ համայնքի «Մշակութային կենտրոն» ոչ առևտրային կազմակերպությունը լուծարվել է, սակայն այդ կազմակերպությունը մինչ օրս գործում է,

բ/ 21.03.2011թ. թիվ 4 որոշմամբ Դեբետ համայնքի համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունը վերակազմակերպվել է «Արևիկ» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրական կազմակերպության:

10) ա/ համայնքի ղեկավարի 17.05.2010թ. թիվ 12 կարգադրությամբ Սերյոժա Տիգրանի Պետրոսյանը, իսկ 26.09.2011թ. թիվ 25 կարգադրությամբ Մարինե Սամվելի Պապանյանը նշանակվել են մշակույթի կենտրոնի տնօրենի պաշտոնում առանց համայնքի ավագանու կողմից համաձայնություն ստանալու որոշման,

բ/ ավագանին իր որոշմամբ համաձայնություն է տվել Լաուրա Պետրոսի Պետրոսյանին «Արևիկ» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում նշանակելուն.

11) 25.08.2010թ. թիվ 18-Ն որոշմամբ հաստատվել են առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները, որոշումը ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն.

12) 03.02.2009թ. թիվ 2, 18.12.2009թ. թիվ 26, 22.12.2010թ. թիվ 25-Ն, 07.12.2011թ. թիվ 28-Ն որոշումներով սահմանվել են 2009, 2010, 2011, 2012թթ. համար տեղական տուրքերի և վճարների տեսակները ու դրույքաչափերը, վերջին երկու որոշումները ուղարկվել են ՀՀ արդարադատության նախարարություն, առաջի երկուսը ոչ: 18.12.2009թ. թիվ 26 որոշումը չի բխում «Տեղական տուրքերը և վճարները սահմանելու մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներից, գյուղապետարանում առկա համայնքի ավագանու 18.12.2009թ. թիվ 26 որոշման հավելվածը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերն են.

13) սահմանել է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը, որոշումների մեջ հղումը կատարվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետին, պետք է հղումը կատարվեր «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետին.

14) համայնքի ղեկավարի առաջարկությամբ համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարելու մասին որոշման կայացում, դրանց վարձավճարների և օտարման գների չափերի և պայմանների, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գների հաստատում.

ա/ 18.12.2009թ. թիվ 28 որոշմամբ 0.1 հա համայնքային սեփականություն հանդիսացող հողը անհատույց օգտագործման է տրամադրվել «Հայպետհիդրոմետ» ՊՈԱԿ-ին Ալարեքս-Դեբետ ջրաչափման դիտակետի գործունեությունը իրականացնելու նպատակով.

բ/ 03.02.2009թ. թիվ 3 որոշմամբ Նորայր Սարգսյանին վարչական շենքից 300 մ² տարածք է հատկացվել՝ կարի արտադրամաս տեղադրելու համար: Որոշման մեջ նշված չէ համայնքային սեփականություն հանդիսացող գույքը ինչ պայմաններով է տրամադրվում, չի որոշվել տրամադրման արժեքը:

գ/ 26.02.2009թ. թիվ 9 որոշում՝ «Նշված տարածքը հատկացնել Է. Դալլաքյանին, մինչև բիզնես ծրագիր ներկայացնեն և պարզ կլինի, թէ ինչի համար են ցանկանում: Իսկ եթե Էդվարդ Դալլաքյանը նպատակային չօգտագործի, ապա նորից կվերցնենք և կհատկացնենք այլ անձի»: Որոշման մեջ հստակ չի նշվում թե ինչ տարածքի մասին է որոշումը, ինչ նպատակով է տրամադրվում, ինչ չափի տարածք է տրամադրվում, ինչ պայմաններով և ինչ արժեքով:

դ/ 26.02.2009թ. թիվ 10 որոշում՝ «Արտակ Սարգսյանին հատկացնել 60 մ² տարածք առևտրով զբաղվելու համար:»: Որոշման մեջ նշված չէ համայնքային սեփականություն համարվող գույքի տրամադրման պայմանները և տրամադրման արժեքը: Այնուհետև հիմք ընդունելով համայնքի ավագանու նշված որոշումը համայնքի ղեկավարը կայացրել է որոշում վարչական շենքից 73.6 մ² տարածք վարձակալությամբ տրամադրել Արտակ Սարգսյանին առևտրով զբաղվելու նպատակով:

ե/ 30.03.2009թ. թիվ 14 որոշմամբ սահմանվել է, որ Դեբետ համայնքի վարչական շենքի վարձակալության տրված 1մ² տարածքի տարեկան վարձավճարը սահմանել 330 դրամ: Որոշումը նորմատիվ է, պետական իրավական փորձաքննության չի ուղարկվել և չի հրապարակվել:

զ/ 18.12.2009թ. թիվ 30 որոշում՝ «Համայնքին պատկանող ծածկագրի, հա հողամասը հանձնել վարձակալության Ռուբիկ Նազլուխանյանին»: Որոշման մեջ հիմք է ընդունվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետը, հղում չկա կատարված ՀՀ Հողային օրենսգրքին, նշված չէ տրամադրվող հողամասի ծածկագիրը, մակերեսը, վարձակալության գումարի չափը և հողամասի ուղղակի տրամադրման հիմքը:

է/ 20.07.2009թ. թիվ 7 նիստի օրակարգում մտցվել է 3-րդ հարց՝ «Մեր Պետրոսյանի դիմումը 155 մմ-ոց խողովակը իրեն տրամադրելու մասին, որի մասին ավագանին որոշում չի կայացրել այլ արձանագրվել է ավագանին տալիս է իր համաձայնությունը Մ. Պետրոսյանի առաջարկին:»

ը/ 24.09.2009թ. թիվ 23 որոշում՝ «Դեբետ համայնքի պատվավոր քաղաքացի Դավիթ Ռաֆիկի Պետրոսյանի հիշատակին հուշաղբյուր և զբոսայգի կառուցելու

համար համայնքային հողերից՝ գետափյա տարածքից հատկացնել 0.25 հա հողամաս»: Որոշման մեջ նշված չէ թե ինչ տարածք է հատկացվում՝ նշված չէ ծածկագիրը, ում է տրամադրվում և ինչ հիմքերով:

թ/ 18.12.2009թ. թիվ 31 որոշմամբ համայնքային սեփականություն համարվող 325մմ-ոց 155 գծամետր խողովակը տրամադրվել է օգտագործման Միհեր Պետրոսյանին:

ժ/ 29.01.2010թ. թիվ 32 որոշում՝ «Գևորգի Թալա կոչվող հանդամասում գտնվող ջրամբարը իր հարակից տարածքով վարձակալության տրամադրել Աշոտ Պապինյանին:»: Որոշման մեջ չկա հղում ՀՀ Հողային օրենսգրքին, նշված չէ տրամադրման հիմքը, հողամասի չափը և արժեքը:

ժա/ 30.09.2010թ. թիվ 20 որոշմամբ ավագանին համաձայնություն է տվել համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերից 4.085 հա տարածք աճուրդ-վաճառքով հատկացնելու մասին: Ավագանին չի որոշել մեկնարկային գինը, նշված չէ օտարվող հողամասի ծածկագիրը:

15) 03.02.2009թ. թիվ 1*, 30.04.2009թ. թիվ 16, 22.05.2009թ. թիվ 20, 12.12.2010թ. թիվ 26 որոշումներով հաստատվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, իսկ 07.12.2011թ. թիվ 29 հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակա հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը: 30.04.2009թ. թիվ 16 որոշման 1-ին կետով հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի, հավելվածը գյուղապետարանում բացակայում է: Նույն որոշման 2-րդ կետով ուժը կորցրած է ճանաչվել համայնքի ավագանու 03.02.2009թ. թիվ 1/1 որոշումը, սակայն նման համարով որոշում չկա, իսկ եթե խոսքը գնում է 03.02.2009թ. թիվ 1 որոշման 1.1 կետին, ապա այդ կետը վերաբերվում է 2009թ. բյուջեի հաստատմանը, իսկ հաստիքացուցակը հաստատվել է 1.2 կետով: 22.12.2010թ. թիվ 26 որոշման 1-ին կետով հաստատվել է Դեբետ գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի: Որոշման մեջ չկա հավելված 2-ի հաստատում «Դեբետ գյուղական համայնքի համայնքային ենթակայության հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին», որը առկա է գյուղապետարանում և որով սահմանվել է «Մշակույթային կենտրոն» համայնքային ենթակայության հիմնարկի հաստիքացուցակը: Համայնքում առկա է նախադպրոցական հիմնարկ, որի հաստիքացուցակը նշված որոշումներով չի հաստատվել, այլ միայն արտացոլվում է տարեկան բյուջեում ներկայացված հաստիքացուցակում:

16) բնակավայրի քաղաքաշինական կանոնադրություն չի հաստատվել.

17) 26.11.2009թ. թիվ 25, 17.11.2010թ. թիվ 21, 17.11.2011թ. թիվ 24 որոշումներով հաստատվել են համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը.

18) 2009-2011թթ. ընթացքում ավագանու հաստատմանն է ներկայացվել միայն 2010թ. համայնքի հողային հաշվեկշիռը.

19) 14.04.2011թ. թիվ 6 որոշմամբ հաստատվել է համայնքի հոգաբարձության և խնամակալության հանձնաժողովի կազմը.

20) 16.02.2010թ. թիվ 34 որոշմամբ հաստատվել է ՏԻՄ-երի կողմից քաղաքացիների ընդունելության կարգը:

* Համայնքի ավագանու 03.02.2009թ. թիվ 1 որոշման 1-ին կետով հաստատվել է 2009թ. համայնքի բյուջեն, 2-րդ կետով հաստատվել է աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի: Հավելվածը առկա չէ:

2010 թվականի առաջին երկու նիստերին ընդունված որոշումների համարակալումը շարունակվել է, այլ ոչ թե սկսվել է 1-ին համարից:

20.03.2009 թվականի 3-րդ նիստը վարել է աշխատակազմի քարտուղար Ա. Քոչարյանը, ինչի իրավասությունը նա չի ունեցել: Համայնքի ավագանու նիստը հրավիրում և վարում է համայնքի ղեկավարը կամ նրա պաշտոնակատարը:

2010թ. ավագանու նիստի արձանագրությունը նախկին գյուղապետի կողմից ստորագրված և կնքված չեն:

27.05.2010թ. ավագանու 8-րդ նիստի օրակարգում ընդգրկված է մեկ հարց, սակայն նիստի ընթացքում քննարկվել է ևս 3 հարց և այդ հարցերի վերաբերյալ ընդունվել են որոշումներ:

24.02.2011թ. 1-ին նիստի ժամանակ ընդունվել է թիվ 1 որոշումը՝ «Հաստատել Դեբետ համայնքի 2010թ. բյուջեի կատարողականը հետևյալ ցուցանիշներով», այնուհետև արձանագրության գրքում գրառվել է թիվ 3 որոշումը, որով ուժը կորցրած է ճանաչվել 24.02.2011թ. թիվ 1 որոշումը և հաստատվել է Դեբետ համայնքի 2010թ. բյուջեի կատարման հաշվետվությունը, սակայն սույն որոշումը ավագանու նիստում չի քննարկվել:

Համայնքի ղեկավարը իր որոշումներով հաստատել է համայնքի բյուջեն, բյուջեի փոփոխությունները ինչի իրավասությունը նա չի ունեցել:

Ոգելից խմիչքի և ծխախոտի թույլտվության որոշումներում հղումը կատարվում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետին, այս դեպքում հղումը պետք է կատարվեր «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետին: Որոշումները ձևակերպվում են հետևյալ բովանդակությամբ՝ «Տալ ոգելից խմիչքի, ծխախոտի և այլն արտադրանքների վաճառքի թույլտվություն»: Եթե խոսքը գնում է նշված օրենքի 40-րդ հոդվածով սահմանված ապրանքատեսակների վաճառքի թույլտվությանը, ապա պետք է կոնկրետ նշվի թե ինչի վաճառքի թույլտվություն է տրվում:

ՀԱՄԱՅՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՅԼ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) Հրավիրվել և վարվել են ավագանու կանոնակարգով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ավագանու նիստեր.

2) համայնքի ղեկավարի անհատական ակտերը ընդունելուց հետո երկօրյա ժամկետում համայնքի ավագանու անդամներին չեն ուղարկվել և համայնքի ավագանու նստավայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում չեն փակցվել.

3) համայնքի զարգացման քառամյա ծրագրը ներկայացվել է ավագանու հաստատմանը.

4) աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացվել են ավագանու հաստատմանը, չեն ներկայացվել համայնքային ենթակայության հիմնարկների աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծերը.

5) համայնքի ավագանուն ներկայացրել է առաջարկություն՝ համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու մասին.

6) աշխարհագրական օբյեկտներին տրամադրվել են հասցեներ.

7) իր իրավասության շրջանակում ընդունել է որոշումներ և արձակել է կարգադրություններ.

8) կազմակերպել է համայնքի բնակիչների հաշվառումը.

9) իրականացրել է քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է առել քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները և ձեռնարկել է համապատասխան միջոցներ.

10) համայնքի զինապարտների գրանցամատյանը վարվում է, չի լրացված գրանցամատյանի 6-րդ այան տվյալները:

Գյուղապետարանում առկա է ցուցատախտակ, ստուգման ժամանակ փակցված էր 2011թ. տարեկան բյուջեի կատարման հաշվետվությունը: Այլ որոշումներ փակցված չէին:

Գյուղապետարանում առկա է քաղաքացիների դիմումների, բողոքների և առաջարկությունների մտից մատյան, գործադիր, տարածքային կառավարման մարմիններից և կազմակերպություններից ստացված գրությունների մտից մատյան, և կազմակերպություններ ուղարկվող գրությունների ելից մատյան:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՄ

1. Համայնքի ղեկավարի 2010թ. դեկտեմբերի 23-ի N 34-Ա որոշմամբ հաստատվել է աշխատակազմի կանոնադրությունը:

2.ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի «Հասարակությանն իրավական ակտերի մասին իրազեկման և իրավական ակտերի հաշվառման կարգերը հաստատելու մասին» N 1146-Ն որոշման համաձայն իրավական ակտն ընդունող մարմինները պարտավոր են պահել իրենց ընդունած իրավական ակտերի հաշվառման մատյան:

Համայնքի ղեկավարի աշխատակազմում խախտվել է ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման պահանջների կատարումը՝

- համայնքի ավագանու որոշումների հաշվառման մատյանը սկսել են վարել միայն 2010 թվականի ապրիլի 10-ից, մատյանում հաշվառված են միայն ավագանու 2010 թվականի NN 7-27, 2011 թվականի NN 1-8 որոշումները:
- համայնքի ղեկավարի որոշումների հաշվառման մատյանը սկսել են վարել միայն 2010 թվականի փետրվարի 8-ից, մատյանում հաշվառված են միայն համայնքի ղեկավարի 2010 թվականի NN 1- 6 որոշումները:
- համայնքի ղեկավարի կարգադրությունների հաշվառման մատյանը սկսել են վարել միայն 2010 թվականի հունվարի 11-ից, մատյանում հաշվառված են միայն համայնքի ղեկավարի 2010 թվականի NN 1-6 որոշումները:

Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի հրամանների հաշվառման մատյան աշխատակազմում չի վարվում, բացի այդ հաշվառման մատյանները կարված, կնիքված և թերթերը համարակալված չեն, համայնքի ավագանու որոշումների, համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների հաշվառման մատյաններում իրավական ակտերի վերաբերյալ գրառումները թերի են լրացվել:

3. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարը իր իրավասության շրջանակում ընդունում է որոշումներ, կազմում է արձանագրություններ և արձակում կարգադրություններ, իսկ

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարը կարող է ընդունել միայն նորմատիվ կամ անհատական իրավական ակտեր, սակայն 2004 թվականի հոկտեմբերի 1-ից սկսած մինչև 2010 թվականի դեկտեմբերի 30-ը համայնքի նախկին և ներկայիս ղեկավարների կողմից ընդունվել են նաև հրամաններ և վարվել է հրամանագիրք:

4. ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 16-ի N 197-Ա հրամանի N 26 հավելվածով հաստատված (հետագայում կատարված փոփոխություններով) Դեբետի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկի համաձայն՝ աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները 6-ն են:

Համայնքի ավագանու 07.12.2011թ. N29-Ա որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը: Հաստատված հաստիքացուցակը համայնքային ծառայության պաշտոնների մասով համապատասխանում է ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի կողմից հաստատված պաշտոնների անվանացանկին:

5. Համայնքի նախկին ղեկավարի 2007 թվականի դեկտեմբերի 24-ի N 34 որոշմամբ հաստատվել են աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը՝ համաձայն NN 1-8 հավելվածների:

Համայնքի նոր ղեկավարը 2010թվականի ապրիլի 10-ի N 11 որոշմամբ հաստատել է աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների նոր անձնագրերը՝ համաձայն NN 1 - 6 հավելվածների, սակայն մինչ օրս ուժը կորցրած չի ճանաչել պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին համայնքի ղեկավարի 2007 թվականի դեկտեմբերի 24-ի N 34 որոշումը:

Համայնքի ղեկավարը 2011 թվականի հուլիսի 27-ի N 15-Ա որոշմամբ հաստատել է աշխատակազմի քարտուղարի պաշտոնի անձնագիրը և ուժը կորցրած է ճանաչել 2011 թվականի ապրիլի 26-ի N 7 որոշմամբ հաստատված քարտուղարի պաշտոնի անձնագիրը:

Հետագայում համայնքի ղեկավարը 2011 թվականի դեկտեմբերի 13-ի N 26-Ա որոշմամբ հաստատել է աշխատակազմի քարտուղարի պաշտոնի նոր անձնագիրը և կրկին ուժը կորցրած է ճանաչել 2011 թվականի ապրիլի 26-ի N 7 որոշմամբ հաստատված քարտուղարի պաշտոնի անձնագիրը:

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ նախկինում գործող օրենքի և ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 07.09.2006թ. N 11-Ն նախկին հրամանով սահմանված կարգի համապատասխան համայնքի ղեկավարը 2008 թվականի ապրիլի 29-ին N 21 որոշմամբ հաստատել է համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ և համայնքային ծառայողների ատեստավորում անցկացնելու համար թեստավորման հարցաշարերը, սակայն հետագայում «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի փոփոխությամբ՝ 2008 թվականի հոկտեմբեր ամսից թեստավորման հարցաշարերի կազմման իրավասությունը վերապահվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմին:

Այս առումով՝ անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2007 թվականի դեկտեմբերի 24-ի N 34 և 2008 թվականի ապրիլի 29-ին N 21, 2011 թվականի հուլիսի 27-ի N 15-Ա որոշումները:

6. Աշխատակազմի համայնքային ծառայողների անձնական գործերը ընդհանուր առմամբ վարվում են ՀՀ տարածքային կառավարման համակարգող

նախարարի 07.11.2006թ. N 20-Ն հրամանով սահմանված համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգին համապատասխան, սակայն անձնական գործերի ներքին վերգիրները թերի են լրացված և չեն համապատասխանում կարգի 18-րդ կետի պահանջներին: Աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 3.1-2) Կարինե Նազլուխանյանի անձնագրի վավերականության ժամկետը լրացել է 2011թ.-ին, սակայն անձնական գործում չկար նոր անձնագրի կամ հին անձնագրի (վավերականության ժամկետի երկարացման մասին նշումով) պատճենը:

7. «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվում են համապատասխան համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու մինչև հինգ անդամներ և մարզպետարանի երեք ներկայացուցիչ, իսկ նշված հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը որոշում է համայնքի ավագանին:

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը հաստատում են համապատասխան համայնքների ղեկավարները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հաստատած մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերի հիման վրա:

ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 12-Ն հրամանով հաստատվել են համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերը:

Այս առումով պետք է նշել, որ դեռևս 2006 թվականին ՀՀ Լոռու մարզպետի կողմից համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկելու նպատակով Դեբետի գյուղական համայնքի ղեկավարին ներկայացվել են մարզպետարանի 3 ներկայացուցիչների տվյալները, սակայն մինչև 2010 թվականը համայնքի նախկին ղեկավարի կողմից չի ընդունվել որոշում մրցութային և ատեստավորման հանձնաժողովներ ստեղծելու մասին:

Ըստ ավագանու նիստերի արձանագրությունների մատյանի 2010 թվականի ապրիլի 10-ի N 5 արձանագրության՝ ավագանին հաստատել է մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը, որը հիմք ընդունելով համայնքի ղեկավարը նույն օրվա նույն N 10, սակայն իրարից տարբեր որոշումներով հաստատել է մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը, ապա մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմը:

Մարզպետարանի ներկայացուցչների փոփոխությամբ պայմանավորված 2011 թվականի ապրիլի 26-ի N 6 որոշմամբ հաստատվել է մրցութային և ատեստավորման հանձնաժողովների նոր կազմը:

Անհասկանալի տրամաբանությամբ համայնքի ավագանին՝ ըստ ավագանու նիստերի արձանագրությունների մատյանի 2010 թվականի ապրիլի 13-ի N 6 արձանագրության՝ հաստատել է մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը, ապա ընտրել է մրցութային և ատեստավորման հանձնաժողովների նախագահի տեղակալ: Պետք է նշել նաև, որ

ըստ N 6 արձանագրության նիստին ներկա են եղել ավագանու անդամներ Արսեն Պետրոսյանը և Նարինե Նազլուխանյանը, սակայն որոշումների տակ ստորագրել է նաև ավագանու անդամ և մրցութային և ատեստավորման հանձնաժողովների նախագահի տեղակալ ընտրված Արտակ Սարգսյանը:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, հետևաբար, համայնքի ավագանու կողմից համայնքի ղեկավարին և մրցութային և ատեստավորման հանձնաժողովներին վերապահված հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

Այս առումով անհրաժեշտ է սահմանված կարգով ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2010 թվականի ապրիլի 13-ի N 6 արձանագրությամբ ընդունված որոշումները, որից հետո հրավիրել հանձնաժողովի աշխատակարգային նիստ, հանձնաժողովի անդամների հետ քննարկել աշխատակարգերը և ընտրել հանձնաժողովի նախագահի տեղակալ, կազմել նիստի անցկացման վերաբերյալ արձանագրություն:

8. «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համայնքային ծառայողների միջև ծառայողական փոխհարաբերությունները կարգավորվում են նաև աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգով, որը հաստատում են համապատասխան համայնքների ղեկավարները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հաստատած օրինակելի կանոնակարգի հիման վրա:

Համայնքների ղեկավարների աշխատակազմերի աշխատանքային կարգապահական ներքին օրինակելի կանոնակարգը հաստատվել է ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի հունվարի 19-ի N 03-Ն հրամանով, իսկ ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2010 թվականի օգոստոսի 9-ի N 09-Ն հրամանով փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի հունվարի 19-ի N 03-Ն հրամանով հաստատված աշխատանքային կարգապահական ներքին օրինակելի կանոնակարգում:

Այս առումով՝ համայնքի ղեկավարի 2010 թվականի հուլիսի 2-ի N 18 որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը, որից հետո համայնքի ղեկավարի 2010 թվականի սեպտեմբերի 23-ի N 26 որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել N 18 որոշումը և ըստ որոշման վերնագրի իբր փոփոխություններ է կատարվել աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգում: Իրականում ընդունված որոշմամբ՝ համայնքի ղեկավարը փոփոխություններ է կատարել ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի հունվարի 19-ի N 03-Ն հրամանում և ստանձնել է պետական լիազոր մարմնի լիազորություններ:

Պետք է նշել նաև, որ 2010 թվականի հուլիսի 2-ի N 18 որոշմանը աշխատակազմի աշխատակիցները չեն իրազեկվել, իսկ 2010 թվականի սեպտեմբերի 23-ի N 26 որոշմանը իրազեկվել է նրանց մի մասը:

Այս առումով անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2010 թվականի սեպտեմբերի 23-ի N 26 որոշումը, հաստատել աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը և ձեռնարկել միջոցներ աշխատակազմի ներքին կարգապահական կանոնակարգը աշխատակազմի աշխատակիցներին պատշաճ իրազեկումն ապահովելու ուղղությամբ:

9. Աշխատակազմում վարվում է համայնքային ծառայության թափուր պաշտոնների մրցույթներին մասնակցելու համար դիմած քաղաքացիների տվյալների գրառման համարակալված մատյան, համայնքային ծառայողների վերապատրաստման հաշվառման մատյան, ինչպես նաև համայնքային ծառայողների անձնական գործերի հաշվառման մատյան, սակայն դրանք լրացվել են թերի և չի պաշտպանվել ժամանակագրական կարգը:

10. ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին» N 13-Ն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետով նախատեսված է, որ համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթն անցկացնելու մասին որոշումն ընդունում է համապատասխան համայնքի ղեկավարը և ապահովում է այդ մասին հայտարարության հրապարակումը, ինչպես նաև մրցույթն անցկացնելու մասին որոշումն ընդունելուց հետո երկօրյա ժամկետում այդ մասին պատշաճ տեղեկացնում է համապատասխան մարզպետարանի աշխատակազմին:

Վերոնշյալի առումով՝ համայնքի ղեկավարի կողմից խախտվել են ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 13-Ն հրամանով հաստատված կարգի պահանջները՝ մասնավորապես աշխատակազմի քարտուղարի (ծածկագիր՝ 1.2-1), աշխատակազմի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-2), աշխատակազմի 2 – րդ կարգի մասնագետների (ծածկագիր՝ 3.3-1 և 3.3-2) թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթներ անցկացնելու մասին համայնքի ղեկավարը որոշումներ չի ընդունել:

Այս առումով անհրաժեշտ է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հետագայում նման բացթողումները կանխելու ուղղությամբ:

11. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը հաստատելու մասին» N 1002-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հղիության, ծննդաբերության և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդի դեպքում համայնքային ծառայության պաշտոնը համարվում է ժամանակավոր թափուր: Այս դեպքերում, ըստ վերոնշյալ որոշմամբ հաստատված կարգի, ժամանակավոր թափուր պաշտոնը տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող՝ կադրերի ռեզերվում գրանցված անձի, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձի կողմից կարող է զբաղեցվել՝ տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից՝ նրա հետ պայմանագիր կնքելով: Այս դեպքերում՝ եռօրյա ժամկետում, տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը գրավոր դիմում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին (այսուհետ՝ լիազորված մարմին)՝ տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող՝ սահմանված կարգով նախապատվություն ստացած՝ կադրերի ռեզերվում գրանցված անձի մասին տեղեկություններ ստանալու և նրա հետ պայմանագիր կնքելու համար:

Տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող՝ կադրերի ռեզերվում գրանցված անձի կողմից դիմում չներկայացվելու կամ դիմում ներկայացրած՝ կադրերի ռեզերվում գրանցված անձի կողմից տվյալ պաշտոնի անձնագրի պահանջների չբավարարման դեպքում լիազորված մարմինը դրա մասին աշխատանքային երեք օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին:

Այս տեղեկությունն ստանալուց հետո աշխատանքային 7 օրվա ընթացքում համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարող է տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող այլ անձի հետ կնքել պայմանագիր:

Պայմանագիրը լուծվում է՝ համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու հիմքի վերացման դեպքում՝ անկախ պայմանագրի գործողության ժամկետից:

Համայնքի ղեկավարը 17.06.2010թ. թիվ 17 կարգադրությամբ աշխատակազմի 2–րդ կարգի մասնագետ (ծածկագիր՝ 3.3-2) Քրիստինե Պողոսյանին տրամադրել է արձակուրդ՝ հղիության և ծննդաբերության կապակցությամբ: Առաջացած ժամանակավոր թափուր պաշտոնը այլ անձի կողմից զբաղեցնելու նպատակով համայնքի ղեկավարը սահմանված կարգի համաձայն դիմել է ՀՀ տարածքային կառավարման նախարարություն և 21.07.2010 թվականին ստացել է թիվ 02/17/4289-10 գրությունը, ըստ որի՝ ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարող է տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող այլ անձի հետ կնքել պայմանագիր: Հաշվի առնելով, որ աշխատակազմում թափուր է նաև քարտուղարի պաշտոնը, համայնքի ղեկավարը 02.08.2010թ.-ին Արմենուհի Սարգսյանի հետ կնքել է ժամկետային աշխատանքային պայմանագիր: Համայնքի ղեկավարը խախտելով ՀՀ կառավարության 1002-Ն որոշմամբ հաստատված կարգը պայմանագրում գործողության ժամկետ չի սահմանել: Նույն օրվա թիվ 22 կարգադրության համաձայն Արմենուհի Սարգսյանի հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը սահմանվել է՝ 02.08.2010թ.-ից մինչև 01.12.2010թ.: Իր այս կարգադրությամբ՝ համայնքի ղեկավարը հիմք է նախապատրաստել հետագայում Արմենուհի Սարգսյանին հղիության և ծննդաբերության կապակցությամբ արձակուրդ տալու համար: Այս հանգամանքը հիմնավորվում է նաև 03.11.2010թ. թիվ 37 կարգադրությամբ, ըստ որի նա 2–րդ կարգի մասնագետ Քրիստինե Պողոսյանին մինչև 30.11.2010թ. տրամադրել է արձակուրդ երեխայի խնամքի համար:

Հետագայում՝ համայնքի ղեկավարը առանց որևէ իրավական ակտ ընդունելու Արմենուհի Սարգսյանին տրամադրել է արձակուրդ հղիության և ծննդաբերության կապակցությամբ, իսկ 02.05.2011թ. թիվ 4 կարգադրությամբ՝ մինչև 2014 թվականի մայիսի 2-ը տրամադրել է արձակուրդ երեխայի խնամքի համար:

Գյուղապետարանի աշխատակազմից ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ներկայացնելու համար համայնքային ծառայողների, ինչպես նաև ժամկետային աշխատանքային պայմանագրով համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վերաբերյալ մարզպետարան ներկայացված գրանցամատյանային տվյալներում (Ձև NN 1, 2) ևս չի ներկայացվել Արմենուհի Սարգսյանի տվյալները:

Իր այս գործունեությամբ համայնքի ղեկավարը խախտել է ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը հաստատելու մասին» N 1002-Ն որոշմամբ հաստատված կարգը և զգալի վնաս է պատճառել պետական բյուջեին:

Հանձնաժողովի նախագահ՝
Ֆին. և սոց. տնտ. զարգացման
վարչության պետի տեղակալ

---------- Լ. Բերոյան

Դեբեդ համայնքի ղեկավար

---------- Կ. Պետրոսյան

Անդամներ՝

ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչ. ՏԻ և
համայնքային ծառ. հարց. բաժնի պետ

---------- Ժ. Ղազարյան

Դեբեդի գյուղապետարանի
աշխատակազմի քարտուղար

---------- Ս. Պետրոսյան

ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչ. ՀԳՄՏՍ
գործ. համակարգման բաժնի պետ

---------- Վ. Հովհաննիսյան

Դեբեդի գյուղապետարանի աշխ.-ազմի
առաջ. մասնագետ՝ հաշվապահ

---------- Ս. Վիրաբյան

Իրավաբանական բաժնի պետ

---------- Ա. Սահակյան

Հողաշինության և հողօգտագործման
բաժնի պետ

---------- Ռ. Քոչարյան

Ֆին. և սոց. տնտ. զարգ. վարչության
ֆին-տնտ. բաժնի գլխ. մասնագետ

---------- Ա. Բեջանյան

Քաղաքաշինության վարչ. ճարտ-շինարարական
բաժնի գլխավոր մասնագետ

---------- Գ. Հախինյան

Ակտ թիվ 2

16.03.2012թ. գ. Հալավար

Լոռու մարզի համայնքներում 2012թ. վարչական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրի համաձայն(ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2012թ. հունվարի 30-ի թիվ 11-Ա և 2012թ. հունվարի 30-ի 02-Ն հրամաններ, ՀՀ Լոռու մարզպետի 2012թ. փետրվարի 13-ի թիվ 48 և 2012թ. փետրվարի 24-ի թիվ 69 կարգադրությունների), մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ Լ. Բերոյանս(հանձնաժողովի նախագահ), իրավաբանական բաժնի պետ՝ Ա. Սահակյանս, հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ՝ Ռ. Քոչարյանս, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ Ժ. Ղազարյանս, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ Վ. Հովհաննիսյանս, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Ա. Բեջանյանս, քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ՝ Գ. Հախինյանս Հալավարի գյուղապետարանում կատարեցինք վարչական ստուգում: Ստուգումը ընդգրկում է 2009թ. հունվարի 1-ից 2012թ. հունվարի 1-ը ընկած ժամանակաշրջանը: Ստուգման աշխատանքներին մասնակցում էին Հալավար համայնքի ղեկավար Ս. Հակոբջանյանը, աշխատակազմի քարտուղար՝ Ա. Մուկուչյանը, աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ՝ Կ.Դոլմազյանը:

Գյուղապետարանի գործունեությունը կանոնակարգվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ Աշխատանքային օրենսգրքով, գյուղապետարանի կանոնադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Բյուջեի սեփական եկամուտների հավաքագրումը 2009թ.-ին կատարվել է 82.2%-ով, 2010թ.-ին՝ 98.5%-ով, 2011թ.-ին՝ 77.8%-ով: Սեփական եկամուտներից մուտքերը 2011թ.-ին 2009թ. նկատմամբ ավելացել են 567.4 հազ. դրամով: Հիմնականում թերակատարվել են հողի հարկի, գույքահարկի, պահուստային հողերի վարձավճարների գանձման ցուցանիշները:

Համայնքի բյուջեի եկամուտները 2009-2011թվականներին

Բյուջեի եկամուտներ	2009թ.			2010թ.			2011թ.		
	Նախա-տեսված	Փաստա-ցի	%	Նախա-տեսված	Փաստա-ցի	%	Նախա-տեսված	Փաստա-ցի	%
ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	**4906.6**	**4507.5**	**91.9**	**6536.7**	**6499.6**	**99.4**	**6956.8**	**5910.4**	**85.0**
Հողի հարկ	604.4	421.2	69.7	584.2	623.9	106.8	782.9	489.5	62.5
Գույքահարկ	120.6	119.3	98.9	120.4	115.3	95.8	149.3	99.5	66.6
Տեղական տուրք	-	60.0	-	17.0	15.0	88.2	17.0	1.5	8.8
Պահուստային հողերի և գույքի վարձավճար.	1517.1	1239.0	81.7	1715.1	16063	93.7	2125.6	1791.4	84.3
Այլ մուտքեր	-	3.5	-		39.0	-	22.0	28.5	129.5
Ընդամենը սեփական եկամուտներ	**2242.1**	**1843.0**	**82.2**	**2436.7**	**2399.5**	**98.5**	**3096.8**	**2410.4**	**77.8**

Պետական բյուջից տրվող դոտացիա	2004.5	2004.5	100.0	3500.0	3500.0	100.0	3500.0	3500.0	100.0
Անասնաբուժական ծառայություն	660.0	660.0	100.0	600.0	600.0	100.0	360.0	-	-
ՖՈՆԴԱՑԻՆ ԲՑՈՒՋԵ	-	-	-	-	-	-	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ	4906.6	4507.5	91.9	6536.7	6499.5	99.4	6956.8	5910.4	85.0

Անասնաբուժական ծառայության համար 2011թ. նախատեսված 360.0 հազ. դրամը չի ֆինանսավորվել, քանի որ համայնքին անասնաբույժ չի հատկացվել և նշված ծառայությունը իրականացվել է Լեռնապատ համայնքում գրանցված անասնաբույժի կողմից: Բյուջեում պետք է կատարվեր համապատասխան փոփոխություն, որը սակայն չի կատարվել: Եթե պետական բյուջեից նախատեսվող եկամուտների գծով մուտքերը կատարվել են 100%-ով, ապա նույնը չի կարելի ասել սեփական եկամուտների հավաքագրման վերաբերյալ: Բոլոր եկամտատեսակների գծով գանձումները թերակատարվել են, ինչի հետևանքով կուտակվել են ապառքներ:

Ստուգման պահին պահուստային հողերի վարձավճարների ապառքները կազմում են մոտ 322.0 հազ. դրամ, այդ թվում՝ խոտհարքների վարձավճարներից՝ 172.0 հազ. դրամ(19 վարձակալ), արոտավարձերից՝ 150.0 հազ. դրամ(11 վարձակալ): Համայնքի ղեկավարին առաջարկվել է վարձավճարները ժամանակին չմուծելու դեպքում սահմանված կարգով հաշվարկել տույժեր և ապահովել գանձումները:

Դրամարկղային ծախսերը 2009-2011թվականներին

Բյուջետային ծախսեր ըստ տնտեսագիտական դասակարգման	2009թ	2010թ	2011թ
1	2	3	4
Ա. Ընթացիկ ծախսեր	4336.5	4782.1	5021.2
Աշխատավարձեր և հավելավճարներ	2743.1	2915.2	3021.3
Պարգևատրումներ և դրամական խրախուսումներ	40.0	52.0	52.0
Սոցիալական ապահովության վճարներ	641.5	667.3	649.4
Էներգետիկ ծառայություններ	69.4	75.5	93.2
Կապի ծառայություններ	90.0	100.0	120.0
Ներքին գործուղումներ	145.4	134.1	140.4
Վարչական ծառայություններ	99.3	125.8	107.6
Համակարգչային ծառայություններ	-	35.0	30.0
Տեղեկատվական ծառայություններ	27.8	32.2	20.8
Ընթացիկ նորոգումներ	-	-	30.5
Գրասենյակային նյութեր	70.0	50.0	150.0
Տրանսպորտային նյութեր	210.0	350.0	300.0
Աշխատակազմի մասն. զարգ. ծառայություններ	-		31.0
Սոցիալական օգնություններ	180.0	210.0	235.0
Այլ ծախսեր	20.0	35.0	40.0
Բ. Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	250.0	698.0	150.0
Վարչական սարքավորումներ	250.0	698.0	150.0
Ընդամենը ծախսեր(Ա+Բ)	4586.5	5480.1	5171.2

Դրամարկղային ծախսերը 2011թ.-ին 2009թ. նկատմամբ աճել են 12.7%-ով, այդ թվում, ընթացիկ ծախսեր՝ 15.8%-ով,իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր (կապիտալ) նվազել է՝ 40.0%-ով:

Վարչական բյուջեի ծախսերի 74-78%-ը ուղղվել է աշխատավարձերին և սոցիալական ապահովության վճարներին: Աշխատավարձերի ընտրանքային ստուգմամբ խախտումներ չեն հայտնաբերվել, հաշվարկվել են բյուջեով սահմանված դրույքաչափերով և վճարվել են ժամանակին:

Միջին աշխատավարձի սխալ հաշվարկելու հետևանքով 2010թ.-ին սխալ է հաշվարկվել արձակուրդային գումարները, ինչի հետևանքով պակաս է

հաշվարկվել՝ Ս. Հակոբջանյանին՝ 3115 դրամ, Ա. Մուկուչյանին՝ 3416 դրամ և Կ. Դոլմազյանին՝ 1070 դրամ(խախտվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 195-րդ հոդվածի պահանջները)։

Գործուղումների համար տրվում են համապատասխան կարգադրություններ կամ հրամաններ, հաշվարկները և վճարումները կատարված են սահմանված կարգով։

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքում առևտրի և սպասարկման ծառայությունների օբյեկտներ չեն գործում։ Ավագանու կողմից սահմանվել են համապատասխան տեղական տուրքեր, սակայն օբյեկտների բացակայության պարագայում գանձումներ և համապատասխան հսկողություն չի իրականացվում։

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2009-2011թթ. համայնքում հողերի վարձակալության նոր պայմանագրեր չեն կնքվել և համայնքային սեփականության հողերի օտարումներ չեն կատարվել։ 37.3 հա վարելահողերից վարձակալությամբ տրված է 1.37 հա, իսկ 188 հա խոտհարքներից վարձակալությամբ տրված է 152.0 հա(թվով 54 պայմանագիր), արոտավայրերից թվով 21 պայմանագրով վարձակալությամբ տրված է 322.0հա։ Վարձակալության պայմանագրերը կնքված են օրենքով սահմանված կարգով։

Համայնքի ամենամյա հողային հաշվեկշիռը չի լրացվում հողերի հաշվառման գրքում։ Համայնքի ղեկավարի կողմից հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ ստուգումներ չեն իրականացվում, բնականաբար չեն լրացվել ստուգումների մատյանը։ Այլ խախտումներ չեն հայտնաբերվել։

ԱՎԱԳԱՆՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1) Ավագանին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան իր կանոնակարգը ընդունել է 2008թ. հոկտեմբերի 30-ի թիվ 17-Ն որոշմամբ։ Որոշումն ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն.

2) 2009 թվականի հունվարի 22-ի թիվ 3 որոշմամբ սահմանված ժամկետում հաստատել է համայնքի զարգացման ծրագիրը, իսկ որոշումը ՀՀ արդարադատության նախարարություն չի ուղարկվել.

3) ա/ համայնքի ավագանին սահմանված կարգով հաստատել է 2009, 2010, 2011, 2012թթ. համայնքի բյուջեները,

բ/հաստատել է բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները,

գ/ հաստատել է բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունները.

4) համայնքի ավագանուն ներկայացվել է համայնքի բյուջեի կատարման ընթացքի մասին եռամսյակային հաղորդումները.

5) չի որոշվել կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները.

6) համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ վերահսկողության իրականացման առումով պետք է նշել, որ համայնքի ղեկավարի անհատական ակտերը սահմանված ժամկետում ավագանու անդամներին չի ուղարկվել և ավագանու նստավայրում չի փակցվել.

7) համայնքի ղեկավարի՝ օրենքին և իրավական այլ ակտերին հակասող որոշումները դատական կարգով չեն վիճարկվել.

8) համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանվել է աշխատակազմի աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին որոշմամբ.

9) համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին օրենքով սահմանված կարգով որոշումներ չեն կայացվել.

10) 12.08.2010թ. թիվ 15-Ն որոշմամբ հաստատվել են առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները, որոշումը ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն.

11) 22.01.2009թ. թիվ 2*, 02.12.2009թ. թիվ 13-Ն**, 10.12.2010թ. թիվ 24-Ն, 18.11.2011թ. թիվ 20-Ն որոշումներով օրենքով սահմանված կարգով սահմանվել են 2009, 2010, 2011, 2012թթ. համար տեղական տուրքերի և վճարների տեսակները ու դրույքաչափերը, որոշումները ուղարկվել են ՀՀ արդարադատության նախարարություն.

12) համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարներ չեն գանձվում.

13) համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարելու մասին որոշումներ չեն կայացվել.

14) 08.04.2010թ.(թիվ 5) որոշում է կայացվել համայնքի վերանվանման մասին.

15) 22.01.2009թ. թիվ 2*, 02.12.2009թ. թիվ 13-Ա**, 10.12.2010թ. թիվ 25-Ա, 18.11.2011թ. թիվ 21-Ա որոշումներով հաստատվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

16) բնակավայրի քաղաքաշինական կանոնադրության չի հաստատվել.

17) 06.11.2009թ. թիվ 12, 08.11.2010թ. թիվ 21, 08.11.2011թ. թիվ 17 որոշումներով հաստատվել են համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը.

18) ավագանու հաստատմանն է ներկայացվել 2009-2011թթ. համայնքի հողային հաշվեկշիռները.

19) 08.04.2011թ. թիվ 5-Ա որոշմամբ հաստատվել է համայնքի հոգաբարձության և խնամակալության հանձնաժողովի կազմը.

20) 29.01.2010թ. թիվ 2 որոշմամբ հաստատվել է ՏԻՄ-երի կողմից քաղաքացիների ընդունելության կարգը, որոշման հավելվածը փակցված է գյուղապետարանում.

21) մեկ անգամ չի ապահովվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերության պահանջը.

* Համայնքի ավագանու 22.01.2009թ. թիվ 2 որոշմամբ հաստատվել է համայնքի 2009թ. բյուջեն, համայնքի ղեկավարի աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրուքաչափերը, 2009թ. համար տեղական տուրքերի և վճարների տեսակները ու դրույքաչափերը, ինչը չի համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին:

** Նույն համարով, սակայն տարբեր՝ նորմատիվ և անհատական բնույթի որոշումներ են կայացվել՝ համայնքի ավագանու 02.12.2009թ. թիվ 13-Ա որոշմամբ

հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, իսկ 02.12.2009թ. թիվ 13-Ն որոշմամբ հաստատվել է 2010թ. համար տեղական տուրքերի և վճարների տեսակները ու դրույքաչափերը: Ինչը չի համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի պահանջներին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՅԼ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) Հրավիրվել և վարվել են ավագանու կանոնակարգով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ավագանու նիստեր.

2) համայնքի ղեկավարը անհատական ակտեր ընդունելուց հետո երկօրյա ժամկետում համայնքի ավագանու անդամներին չեն ուղարկվել և համայնքի ավագանու նստավայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում չեն փակցվել.

3) համայնքի զարգացման քառամյա ծրագիրը ներկայացվել է ավագանու հաստատմանը.

4) աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացվել են ավագանու հաստատմանը.

5) աշխարհագրական օբյեկտներին տրամադրել է հասցեներ.

6) իր իրավասության շրջանակում ընդունել է որոշումներ և արձակել է կարգադրություններ.

7) կազմակերպել է համայնքի բնակիչների հաշվառումը.

8) իրականացրել է քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է առել քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները և ձեռնարկել է համապատասխան միջոցներ.

9) գյուղապետարանում վարվում է համայնքի զինապարտների գրանցամատյանը:

Գյուղապետարանում չկար ցուցատախտակ, իսկ համայնքի ավագանու որոշումները փակցվում են գյուղապետարանի ներսում՝ պատին, ստուգման ժամանակ փակցված էր համայնքի ղեկավարի 2011թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

Գյուղապետարանում առկա է քաղաքացիների դիմումների, բողոքների և առաջարկությունների մտից մատյան, գործադիր, տարածքային կառավարման մարմիններից և կազմակերպություններից ստացված գրությունների մտից մատյան, և կազմակերպություններ ուղարկվող գրությունների ելից մատյան:

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱԴՐԵՐԻ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՄ

1. ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 16-ի N 197-Ա հրամանի N 51 հավելվածով հաստատված Հալավարի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկի համաձայն աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները 3-ն են:

2. Համայնքի ղեկավարի 2010թ. մայիսի 3-ի N 08-Ա որոշմամբ հաստատվել է աշխատակազմի կանոնադրությունը:

3. Համայնքի ավագանու 18.11.2011թ. N 21-Ա որոշմամբ հաստատվել է գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը: Հաստատված հաստիքացուցակը համայնքային ծառայության պաշտոնների մասով համապատասխանում է ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի կողմից հաստատված պաշտոնների անվանացանկին:

4. Աշխատակազմի համայնքային ծառայողների անձնական գործերը վարվում են ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 7-ի N 20-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգին համապատասխան:

5. Համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գործընթացներում թերություններ չեն հայտնաբերվել:

Հանձնաժողովի նախագահ՝
Ֆին. և սոց. տնտ. զարգացման
վարչության պետի տեղակալ

---------- Լ. Բերոյան

Հալավար համայնքի ղեկավար

---------- Ս. Հակոբջանյան

Անդամներ՝

ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչ. ՏԻ և
համայնքային ծառ. հարց. բաժնի պետ

---------- Ժ. Ղազարյան

Հալավար գյուղապետարանի
աշխատակազմի քարտուղար

---------- Ա. Մուկուչյան

ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչ. ՀԳՄՏՍ
գործ. համակարգման բաժնի պետ

---------- Վ. Հովհաննիսյան

Հալավարի գյուղապետարանի աշխատա-
կազմի առաջ. մասնագետ՝ հաշվապահ

---------- Կ. Դոլմազյան

Իրավաբանական բաժնի պետ

---------- Ա. Սահակյան

Հողաշինության և հողօգտագործման
բաժնի պետ

---------- Ռ. Քոչարյան

Ֆին. և սոց. տնտ. զարգ. վարչության
ֆին-տնտ. բաժնի գլխ. մասնագետ

---------- Ա. Բեջանյան

Քաղաքաշինության վարչ. ճարտ-շինարարական
բաժնի գլխավոր մասնագետ

---------- Գ. Հախինյան

Ակտ թիվ 6

30.03.2012թ. **ք. Թումանյան**

Լոռու մարզի համայնքներում 2012թ. վարչական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրի համաձայն(ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2012թ. հունվարի 30-ի թիվ 11-Ա և 2012թ. հունվարի 30-ի 02-Ն հրամաններ, ՀՀ Լոռու մարզպետի 2012թ. փետրվարի 13-ի թիվ 48 և 2012թ. մարտի 14-ի թիվ 92 կարգադրությունների), մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ Լ. Բերոյանս(հանձնաժողովի նախագահ), իրավաբանական բաժնի պետ՝ Ա. Սահակյանս, հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ՝ Ռ. Քոչարյանս, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ Ժ. Ղազարյանս, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ Վ. Հովհաննիսյանս, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Ա. Բեջանյանս, քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ՝ Գ. Հախինյանս Թումանյանի քաղաքապետարանում կատարեցինք վարչական ստուգում: Ստուգումը ընդգրկում է 2009թ. հունվարի 1-ից 2012թ. հունվարի 1-ը ընկած ժամանակաշրջանը: Ստուգման աշխատանքներին մասնակցում էին Թումանյանի քաղաքապետ Լ. Ջավարյանը, աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Շահվերդյանը, աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ՝ Ա. Ամիրջանյանը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի վերաբերյալ: Բյուջեի սեփական եկամուտների հավաքագրումը 2009թ.-ին կատարվել է 89.8%-ով, 2010թ.-ին՝ 92.8%-ով, 2011թ.-ին՝ 101.4%-ով: Սեփական եկամուտներից մուտքերը 2011թ.-ին 2009թ. նկատմամբ ավելացել են 539.7 հազ. դրամով:

Համայնքի բյուջեի եկամուտները 2009-2011թվականներին

Բյուջեի եկամուտներ	2009թ.			2010թ.			2011թ.		
	Նախա-տեսված	Փաստացի	%	Նախա-տեսված	Փաստացի	%	Նախա-տեսված	Փաստացի	%
ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	**25102.3**	**24615.9**	**98.1**	**28663.4**	**28326.4**	**98.9**	**28273.3**	**28279.9**	**100.02**
Հողի հարկ	649.8	507.2	78.1	603.0	668.1	110.8	904.7	827.7	91.5
Գույքահարկ	1438.6	1232.2	85.7	1384.2	1074.3	77.6	1498.7	1564.3	104.4
Տեղական տուրք	502.0	497.3	110.4	542.0	470.5	86.8	510.0	478.9	93.9
Պահուստային հողերի և գույքի վարձավճար.	110.0	121.5	110.4	354.0	328.6	92.8	340.0	254.9	75.0
Այլ մուտքեր	2080.3	1936.1	93.1	1792.0	1796.7	100.3	1514.9	1708.2	112.8
Ընդամենը սեփական եկամուտներ	**4780.7**	**4294.3**	**89.8**	**4675.2**	**4338.2**	**92.8**	**4768.3**	**4834.0**	**101.4**
Պետական բյուջից տրվող դոտացիա	19661.6	19661.6	100.0	23388.2	23388.2	100.0	23145.9	23145.9	100.0
Անասնաբուժական ծառայություն	660.0	660.0	100.0	600.0	600.0	100.0	360.0	300.0	100.0
ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	**1985.0**	**1950.0**	**98.2**	**400.0**	**400.0**	**100.0**	**121.5**	**121.5**	**100.0**
Վարչական բյուջեից հատկացումներ	985.0	950.0	96.4	400.0	400.0	100.0	121.5	121.5	100.0

Պետական բյուջեից տրված սուբվենցիա	1000.0	1000.0	100.0	-	-	-	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ	27087.3	26565.9	98.1	29063.4	28736.4	98.9	28394.8	28401.4	100.02

Սեփական եկամուտների գծով առանձին տարիների գանձումները թերակատարվել են, ինչի հետևանքով 2012թ. հունվարի 1-ի դրությամբ կուտակվել են ապառքներ, այդ թվում՝ հողի հարկից(ներառյալ տույժ-տուգանքները)՝ 870536 դրամ, գույքահարկից (ներառյալ տույժ-տուգանքներ)՝ 1653974 դրամ, համայնքային սեփականության բնակարանների վարձավճար՝ 72700դրամ: Համայնքի ղեկավարին առաջարկվել է ձեռնարկել համապատասխան միջոցներ կուտակված ապառքները հավաքագրելու ուղղությամբ:

Դրամարկղային ծախսերը 2009-2011թվականներին

Բյուջետային ծախսեր ըստ տնտեսագիտական դասակարգման	2009թ	2010թ	2011թ
1	2	3	4
Ա. Ընթացիկ ծախսեր	**24248.1**	**27436.4**	**27735.0**
Աշխատավարձեր և հավելավճարներ	14024.3	16209.4	14169.4
Պարգևատրումներ նդրամական խրախոսումներ	697.0	700.0	690.0
Սոցիալական ապահովության վճարներ	3121.2	3740.0	3063.6
Էներգետիկ ծառայություններ	246.3	338.0	250.0
Կապի ծառայություններ	210.4	231.2	241.0
Ապահովագրական ծախսեր	-	70.0	70.0
Գործուղումներ և ծառայողական շրջագայություններ	200.0	764.1	206.5
Ներկայացուցչական ծախսեր	100.0	200.0	200.0
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	223.0	21.2	320.0
Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	-	-	30.0
Համակարգչային ծառայություններ	41.4	41.4	41.4
Տեղեկատվական ծառայություններ	76.8	193.0	100.0
Մասնագիտական ծառայություններ	96.0	72.8	194.2
Ընթացիկ նորոգումներ	1336.6	977.8	1168.0
Գրասենյակային նյութեր	331.1	320.0	200.0
Տրանսպորտային նյութեր	965.0	1265.0	1300.0
Հատուկ նպատակային այլ նյութեր	150.0	250.0	80.0
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	1107.5	1050.0	285.0
Դրամաշնորհներ	-	-	4232.7
Սոցիալական օգնություններ	300.0	500.0	500.0
Այլ ծախսեր	1021.5	492.5	393.2
Բ. Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	**2070.0**	**766.5**	**1099.0**
Շենք և շինությունների կառուցում	392.0		999.0
Տրանսպորտային սարքավորումներ	55.0	-	100.0
Վարչական սարքավորումներ	1107.0	766.5	-
Այլ մեքենաներ և սարքավորումներ	516.0	-	-
Ընդամենը ծախսեր	**26318.1**	**28202.9**	**28834.0**

Դրամարկղային ծախսերը 2011թ.-ին 2009թ. նկատմամբ աճել են 9.6%-ով, այդ թվում՝ ընթացիկ ծախսերը՝ 14.3%-ով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ) նվազել է 46.9%-ով:

Կատարված դրամարկղային ծախսերի օրինականության ստուգմամբ պարզվեց, որ 2009թ. գործունեությունը ստուգվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից, ուստի մեր կողմից ուսումնասիրվել է 2010-2011թթ. գործունեությունը:

Դրամարկղային ծախսերի շուրջ 68 տոկոսը ուղղվել է աշխատավարձերի և դրանց հավասարեցված վճարներին և պարտադիր սոցիալական ապահովության վճարներին:

Աշխատավարձերի ընտրանքային ստուգմամբ խախտումներ չեն հայտնաբերվել:

Արձակուրդային գումարների հաշվարկման ժամանակ որոշ դեպքերում միջին աշխատավարձը հաշվարկվել է ոչ սահմանված կարգով, ինչի արդյունքում պակաս է հաշվարկվել Ա. Էվոյանին՝ 4761 դրամ, Ն. Թորոսյանին՝ 3174 դրամ, Ա. Մոսինյանին՝ 4285 դրամ (միջին աշխատավարձի հաշվարկման ժամանակ նախորդ 12 ամսում ստացված պարգևատրման գումարները չեն մտցվել):

Գործուղման հրամաններում և կարգադրություններում հստակ չի նշվում գործուղման նպատակը: 2010-2011թթ. մեկ օրով գործուղումներ մեկնելու ժամանակ որոշ դեպքերում հաշվարկվել է յուրաքանչյուր գործուղման համար 2000 դրամ օրապահիկի գումար: Խախտվել է ՀՀ կառավարության 24.08.2006թ. թիվ 1422 – Ն «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման կարգը սահմանելու մասին» որոշման պահանջը, համաձայն որի, հիմնական աշխատանքի վայրից մինչև 30 կմ գործուղված աշխատողին կամ անկախ հեռավորությունից հիմնական աշխատանքի վայրից մեկնելու և նույն օրը վերադառնալու դեպքում գործուղվող աշխատողին հատուցվում է միայն ճանապարհածախս: Նշված խախտման հետևանքով 2010-2011թ.թ.-ին ավելի է հաշվարկվել 18000 դրամ գործուղման գումար:

2011թ. համայնքի ղեկավարը պայմանագիր է կնքել ֆիզիկական անձ Հրաչյա Սիմոնյանի հետ, համաձայն որի նա պարտավորվում է դպրոցահասակ երեխաներին տեղափոխել դպրոց, որի դիմաց քաղաքապետարանը նրան ամսական վճարում է 40000 դրամ: Համաձայն «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի մատուցված ծառայության գումարներից 10 %-ի չափով պետք է փոխանցել պետական բյուջե որպես եկամտահարկ, սակայն 2011թ և 2012թ. առաջին եռամսյակում Հ. Սիմոնյանին փոխանցվել է 440000 դրամ և համաձայն օրենքի պահանջի պետք է փոխանցվեր 44000 դրամ եկամտահարկ, որը սակայն չի արվել: Պետք է վերանայել նաև կնքված պայմանագիրը, քանի որ պայմանագրով հարկային պարտավորությունների վերաբերյալ նշումները բացակայում են:

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի տարածքում գործում են չորս մթերային խանութներ և մեկ գազալցակայան, որոնց համար 2009թ., 2010թ., 2011թ և 2012թ տեղական տուրք է սահմանվել ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար եռամսյակը՝ 1500 դրամ և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար եռամսյակը՝ 1500 դրամ, գազալցակայանի համար տարեկան՝ 150000 դրամ: 2011թ. նախատեսված տեղական տուրքը չորս տնտեսավարող սուբյեկտներից և մեկ գազալցակայանից ամբողջությամբ գանձվել է:

Միաժամանակ հանձնաժողովի արձանագրեց, որ համապատասխան թույլտվությունների համար մուծումները որոշ դեպքերում կատարվում են ընթացքում և ոչ թե նախապես եռամսյակը սկսվելուց առաջ, կամ խախտվել է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջները.«Տեղական տուրք (կամ) վճար գանձող մարմինների պաշտոնատար

անձինք տեղական տուրքի կամ վճարի հաշվարկն իրականացնում և տեղական տուրք կամ վճարը գանձում են նախքան այդ լիազորությունների կամ գործողությունների իրականացումը.. »

Առևտրի և ծառայությունների ոլորտում համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի և «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17.1 հոդվածի չեն իրականացվել համապատասխան հսկողություն: Ընդունված կարգի համաձայն համայնքի ղեկավարը իրավասու է առևտրի օբյեկտներում կատարել ստուգումներ և անօրինական գործունեության համար նշանակել համապատասխան տուգանքներ:

Վաճառքի թույլտվությունների տրման ժամանակ խախտվել է ՀՀ կառավարության 2007թ. հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշման պահանջը՝ չեն ներկայացվել թույլտվության հայտեր, չեն լրացվել սահմանված թույլտվության ձևեր:

ԱՎԱԳԱՆՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1) Ավագանին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան իր կանոնակարգը ընդունել է 2008թ. նոյեմբերի 14-ի թիվ 2-Ն* որոշմամբ, որոշումը փակցված է ավագանու նստավայրում, ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն.

2) 2009 թվականի մարտի 17-ի թիվ 9 որոշմամբ հաստատել է համայնքի զարգացման ծրագրը.

3) ա/ համայնքի ավագանին սահմանված կարգով հաստատել է 2009, 2010, 2011, 2012թթ. համայնքի բյուջեները,

բ/հաստատել է բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները,

գ/ բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունները հաստատելու փոխարեն ի գիտություն է ընդունել տարեկան բյուջեի կատարման մասին հաղորդումը.

4) համայնքի բյուջեի կատարման վերահսկման առումով պետք է նշել, որ համայնքի ավագանուն ներկայացվել է համայնքի բյուջեի կատարման ընթացքի մասին 2009թ., 2010թ. և 2011թ. եռամսյակային հաղորդումները.

5) չի որոշվել կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները.

6) համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ վերահսկողության իրականացման առումով պետք է նշել, որ համայնքի ղեկավարի անհատական ակտերը ավագանու անդամներին չեն ուղարկվում, սակայն փակցվում են ավագանու նստավայրում՝ քաղաքապետարանի ցուցատախտակին.

7) համայնքի ղեկավարի որոշումները ավագանու կողմից դատական կարգով չեն վիճարկվել.

8) 02.02.2009թ. թիվ 2-Ն, 17.12..2009թ. թիվ 41-Ն, 10.11.2010թ. թիվ 32-Ն և 07.11.2011թ. թիվ 30-Ն որոշումներով սահմանվել է համայնքի ղեկավարի վարձատրության չափը.

9) 18.03.2011թ. թիվ 6 որոշմամբ ՀՀ Լոռու մարզի Թումանյան քաղաքի թիվ 2 մանկապարտեզը վերակազմակերպվել է «ՀՀ Լոռու մարզի ք. Թումանյանի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն.

10) 18.03.2011թ. թիվ 6 որոշման 3-րդ կետով համայնքի ավագանին համաձայնություն է տվել «ՀՀ Լոռու մարզի ք. Թումանյանի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում նշանակել համայնքի ղեկավարի ներկայացրած թեկնածուին.

11) 15.05.2009թ. թիվ 16-Ն որոշմամբ հաստատվել են առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները, որոշումը ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն.

12) սահմանվել են 2009, 2010, 2011, 2012թթ. համար տեղական տուրքերի և վճարների տեսակները ու դրույքաչափերը, որոշումները ուղարկվել են ՀՀ արդարադատության նախարարություն: Չնայած այն հանգամանքին, որ նշված որոշումները հրապարակվել են, սակայն բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվել է յուրաքանչյուր օրվա համար՝ 200 դրամ, ինչը չի համապատասխանում «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ կետի ա) ենթակետի պահանջներին: 15.12.2011թ. թիվ 16-Ն որոշման վերջին կետով ուժը կորցրած է ճանաչվել համայնքի ավագանու 23.12.2010թ. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան քաղաքային համայնքում 2011թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 20-Ն որոշումը, ինչը տրամաբանական չէ, քանի որ նշված որոշումով տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանվել են 2011 թվականի համար և 2012 թվականին չեն գործում:

13) սահմանվել են 2009, 2010, 2011, 2012 թվականների համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարներների չափերը, որոշումները ուղարկվել են ՀՀ արդարադատության նախարարություն.

14) համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացրել համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարելու մասին, հաստատել է դրանց վարձավճարների և օտարման գների չափերը և պայմանները.

15) որոշում է կայացրել Թումանյան համայնքի կազմում ընդգրկված Քոբեր գյուղը անվանափոխել Քոբայր.

16) 02.02.2009թ. թիվ 3-Ն, 17.12.2009թ. թիվ 41-Ն, 10.11.2010թ. թիվ 32-Ն, 09.11.2011թ. թիվ 30-Ն որոշումներով հաստատվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը: Այս որոշումներում ուժը կորցրած չի ճանաչվել հաստիքացուցակը հաստատելու մասին նախկին որոշումը:

17) բնակավայրի քաղաքաշինական կանոնադրություն չի հաստատվել.

18) ավագանու որոշումներով հաստատվել են համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը.

19) ավագանու որոշումներով հաստատվել են 2010 և 2011թթ. դրությամբ համայնքի հողային հաշվեկշիռները, 2009թ. չի հաստատվել հողային հաշվեկշիռը.

20) 15.04.2011թ. թիվ 11 որոշմամբ հաստատվել է համայնքի հոգաբարձության և խնամակալության հանձնաժողովի կազմը.

21) 02.03.2010թ. թիվ 6-Ա որոշմամբ հաստատվել է ՏԻՄ-երի կողմից քաղաքացիների ընդունելության կարգը.

*Նորընտիր ավագանու նիստերի արձանագրությունները և ընդունած որոշումները համարակալվել են 1-ին համարից, ինչը չի համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին:

1) Հրավիրվել և վարվել են ավագանու կանոնակարգով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ավագանու նիստեր.

2) համայնքի ղեկավարի անհատական ակտերը ընդունելուց հետո երկօրյա ժամկետում համայնքի ավագանու անդամներին չեն ուղարկվել, համայնքի ավագանու նստավայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցվել են.

3) համայնքի զարգացման քառամյա ծրագրը ներկայացվել է ավագանու հաստատմանը.

4) աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացվել են ավագանու հաստատմանը.

5)համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկի վերակազմակերպման մասին որոշման նախագիծը ներկայացրել է ավագանու հաստատմանը.

6) նշանակել է համայնքի բյուջետային հիմնարկի ղեկավար՝ համայնքի ավագանու որոշմամբ.

7)համայնքի ավագանուն ներկայացրել է առաջարկություններ՝ համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործելու տրամադրելու և օտարելու մասին.

8) աշխարհագրական օբյեկտներին տրամադրել է հասցեներ.

9) իր իրավասության շրջանակում ընդունել է որոշումներ և արձակել է կարգադրություններ.

10) իրականացրել է քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է առել քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները և ձեռնարկել է համապատասխան միջոցներ.

11) համայնքի զինապարտների գրանցամատյանը վարվում է ոչ թե ըստ տարիների և այբբենական հերթականության, այլ ըստ բնակության հասցեների հերթականության:

Քաղաքապետարանում առկա է ցուցատախտակ, ցուցատախտակին փակցված են ավագանու և համայնքի ղեկավարի որոշումները:

Քաղաքապետարանում առկա է քաղաքացիների դիմումների, բողոքների և առաջարկությունների մտից մատյան, գործադիր, տարածքային կառավարման մարմիններից և կազմակերպություններից ստացված գրությունների մտից մատյան, և կազմակերպություններ ուղարկվող գրությունների ելից մատյան:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՄ

1. ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 29-ի N 54-Ա հրամանով հաստատված Թումանյանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկի համաձայն՝ աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները 6-ն են:

2. «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համայնքային ծառայողների միջև ծառայողական փոխհարաբերությունները կարգավորվում են նաև աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգով, որը հաստատում են համապատասխան

համայնքների ղեկավարները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հաստատած օրինակելի կանոնակարգի հիման վրա:

Համայնքների ղեկավարների աշխատակազմերի աշխատանքային կարգապահական ներքին օրինակելի կանոնակարգը հաստատվել է ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի հունվարի 19-ի N 03-Ն հրամանով, իսկ ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2010 թվականի օգոստոսի 9-ի N 09-Ն հրամանով փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի հունվարի 19-ի N 03-Ն հրամանով հաստատված աշխատանքային կարգապահական ներքին օրինակելի կանոնակարգում:

Այս առումով՝ համայնքի ղեկավարի 2009 թվականի սեպտեմբերի 18-ի N 19-Ն որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը, որից հետո համայնքի ղեկավարի 2010 թվականի սեպտեմբերի 17-ի N 45-Ն որոշմամբ նոր բովանդակությամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը, ուժը կորցրած չճանաչելով համայնքի ղեկավարի 2009 թվականի սեպտեմբերի 18-ի N 19-Ն որոշումը:

Այս առումով՝ անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2009 թվականի սեպտեմբերի 18-ի N 19-Ն որոշումը և ձեռնարկել միջոցներ աշխատակազմի ներքին կարգապահական կանոնակարգը աշխատակազմի աշխատակիցներին պատշաճ իրազեկումն ապահովելու ուղղությամբ:

3. ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին» N 13-Ն հրամանով հաստատված կարգի 16-րդ կետով նախատեսված է, որ համայնքների ղեկավարների աշխատակազմերում պետք է վարվի համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթներին մասնակցելու համար դիմած քաղաքացիների տվյալների գրառման համարակալված մատյան:

Մատյանում պետք է լրացված լինի՝ թափուր պաշտոնի անվանումը(ծածկագիրը), դիմողի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը, բնակության վայրը (հասցեն), անձնագրի համարը և սերիան, ներկայացված փաստաթղթերի ցանկը և էջերի թիվը, փաստաթղթերի ներկայացման տարին, ամիսը, ամսաթիվը:

Քաղաքապետարանի աշխատակազմում առկա էր համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթներին մասնակցելու համար դիմած քաղաքացիների տվյալների գրառման համարակալված մատյանը, սակայն մատյանում չկար լրացված թափուր պաշտոնի անվանումը(ծածկագիրը), դիմողի ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը, բնակության վայրը (հասցեն), անձնագրի համարը և սերիան, ներկայացված փաստաթղթերի էջերի թիվը:

Այս առումով՝ անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով վարել համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթներին մասնակցելու համար դիմած քաղաքացիների տվյալների գրառման համարակալված մատյանը:

4. ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից 2009 թվականին քաղաքապետարանի աշխատակազմի կադրային գործի վարման *նկատմամբ իրականացված վերահսկողության ընթացքում հայտնաբերված* թերությունների վերացման ուղղությամբ տարվել են զգալի աշխատանքներ, ինչի արդյունքում հայտնաբերված թերությունները ամբողջությամբ վերացվել են:

5. ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 30.01.2012թ. «Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության և կադրային գործի վարման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» N 02-Ն հրամանի հավելվածով հաստատված մեթոդական ուղեցույցի «Կադրային գործի վարում» բաժնով նախատեսված կադրային գործի վարման այլ գործընթացներում թերություններ չեն հայտնաբերվել:

Հանձնաժողովի նախագահ՝
Ֆին. և սոց. տնտ. զարգացման
վարչության պետի տեղակալ

---------- Լ. Բերոյան

Թումանյանի քաղաքապետ

---------- Լ. Ջավարյան

Անդամներ՝

ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչ. ՏԻ և
համայնքային ծառ. հարց. բաժնի պետ

---------- Ժ. Ղազարյան

Թումանյանի քաղաքապետարանի
աշխատակազմի քարտուղար

---------- Ռ. Շահվերդյան

ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչ. ՀԳՄՏՍ
գործ. համակարգման բաժնի պետ

---------- Վ. Հովհաննիսյան

Թումանյանի քաղաքապետարանի աշխ.-ազմի
առաջ. մասնագետ՝ հաշվապահ

---------- Ա. Ամիրջանյան

Իրավաբանական բաժնի պետ

---------- Ա. Սահակյան

Հողաշինության և հողօգտագործման
բաժնի պետ

---------- Ռ. Քոչարյան

Ֆին. և սոց. տնտ. զարգ. վարչության
ֆին-տնտ. բաժնի գլխ. մասնագետ

---------- Ա. Բեջանյան

Քաղաքաշինության վարչ. ճարտ-շինարարական
բաժնի գլխավոր մասնագետ

---------- Գ. Հախինյան

Ակտ թիվ 1

12.03.2012թ. **գ. Լերմոնտովո**

Լոռու մարզի համայնքներում 2012թ. վարչական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրի համաձայն(ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2012թ. հունվարի 30-ի թիվ 11-Ա և 2012թ. հունվարի 30-ի 02-Ն հրամաններ, ՀՀ Լոռու մարզպետի 2012թ. փետրվարի 13-ի թիվ 48 և 2012թ. փետրվարի 23-ի թիվ 68 կարգադրությունների), մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ Լ. Բերոյանս(հանձնաժողովի նախագահ), իրավաբանական բաժնի պետ՝ Ա. Սահակյանս, հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ՝ Ռ. Քոչարյանս, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ Ժ. Ղազարյանս, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ Վ. Հովհաննիսյանս, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Ա. Բեջանյանս, քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ՝ Գ. Հախինյանս Լերմոնտովոյի գյուղապետարանում կատարեցինք վարչական ստուգում: Ստուգումը ընդգրկում է 2009թ. հունվարի 1-ից 2012թ. հունվարի 1-ը ընկած ժամանակաշրջանը: Ստուգման աշխատանքներին մասնակցում էին Լերմոնտովո համայնքի ղեկավար Է. Չախալյանը, աշխատակազմի քարտուղար՝ Ա. Հարությունյանը, աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ՝ Մ. Բոլոտինան:

Գյուղապետարանի գործունեությունը կանոնակարգվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ Աշխատանքային օրենսգրքով, գյուղապետարանի կանոնադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի վերաբերյալ: Բյուջեի սեփական եկամուտներ նախատեսված են 2009թ.-ին՝ 8500.3 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 7518.9 հազ. դրամ(88.3%), 2010թ.-ին՝ 8430.0 հազ. դրամի դիմաց՝ 8558.0 հազ. դրամ(100.3%), 2011թ.-ին՝ 7554.4 հազ դրամի դիմաց՝ 7593.7 հազ. դրամ(100.5%): Սեփական եկամուտներից մուտքերը 2011թ.-ին 2009թ. նկատմամբ աճել է 74.8 հազ. դրամով: Հիմնականում թերակատարվել են գույքահարկի, պահուստային հողերի վարձավճարների, տեղական տուրքերի գանձման ցուցանիշները: Առանձին դեպքերում թերակատարվել են նաև հողի հարկի և այլ մուտքերի գծով գանձումները:

Համայնքի բյուջեի եկամուտները 2009-2011թվականներին

Բյուջեի եկամուտներ	2009թ.			2010թ.			2011թ.		
	Նախա-տեսված	Փաստա ցի	%	Նախա-տեսված	Փաստա ցի	%	Նախա-տեսված	Փաստա ցի	%
ՎԱՐՉԱԿԱ ԲՅՈՒՋԵ	17292.3	16310.9	94.3	19027.7	19055.7	100.1	18099	18138.4	100.2
Հողի հարկ	4478.4	4190.2	93.6	4149.3	4234.9	102.1	3504.0	3657.8	104.4

Գույքահարկ	441.4	249.1	56.4	467.3	419.0	89.7	529.4	507.6	95.9
Տեղական տուրք	250.0	212.1	84.8	360.0	330.4	91.8	360.0	336.0	93.3
Պահուստային հողերի վարձավճար.	3330.5	2675.9	80.3	4053.4	4073.6	100.5	3043.4	2979.7	97.9
Այլ մուտքեր	-	191.6	-	120.0	187.4	156.2	117.6	112.7	95.8
Ընդամենը սեփա-կան եկամուտներ	**8500.3**	**7518.9**	**88.3**	**8430.0**	**8458.0**	**100.3**	**7554.4**	**7593.7**	**100.5**
Պետական բյուջից տրվող դոտացիա	8132.0	8132.0	100.0	9997.7	9997.7	100.0	10244.7	10244.7	100.0
Անասնաբուժական ծառայություն	660.0	660.0	100.0	600.0	600.0	100.0	300.0	300.0	100.0
ՖՈՆԴԱՑԻ ԲՅՈՒՋԵ									
ԸՆԴԱՄԵՆԸ	**17292.3**	**16310.9**	**94.3**	**19027.7**	**19055.7**	**100.1**	**18099.1**	**18138.4**	**100.2**

Եթե պետական բյուջեից նախատեսվող եկամուտների գծով մուտքերը կատարվել են 100%-ով, ապա նույնը չի կարելի ասել սեփական եկամուտների հավաքագրման վերաբերյալ: Բոլոր եկամտատեսակների գծով առանձին տարիների գանձումները թերակատարվել են, ինչի հետևանքով կուտակվել են ապառքներ:

Դրամարկղային ծախսերը 2009-2011թվականներին

Բյուջետային ծախսեր ըստ տնտեսագիտական դասակարգման	**2009թ**	**2010թ**	**2011թ**
1	2	3	4
Ա. Ընթացիկ ծախսեր	**14462.7**	**15775.4**	**14565.2**
Աշխատավարձեր և հավելավճարներ	9160.6	9661.6	9264.2
Պարգևատրումներ նդրամական խրախոսումներ	700.0	692.0	599.8
Սոցիալական ապահովության վճարներ	1954.8	2105.0	1931.2
Էներգետիկ ծառայություններ	190.0	422.3	590.5
Կոմունալ ծառայություններ	-	-	324.0
Կապի ծառայություններ	193.3	197.0	209.9
Ապահովագրական ծախսեր	-	30.0	25.0
Ներքին գործուղումներ	149.0	211.1	170.8
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	620.0	-	100.0
Վարչական ծառայություններ	50.0	60.0	50.0
Համակարգչային ծառայություններ	-	35.0	35.0
Տեղեկատվական ծառայություններ	148.0	90.8	84.0
Մասնագիտական ծառայություններ	100.0	250.1	54.8
Ընթացիկ նորոգումներ	-	740.4	-
Գրասենյակային նյութեր	300.0	300.0	125.0
Տրանսպորտային նյութեր	150.0	180.0	150.0
Աշխատակազմի մասն. զարգ. ծառայություններ	-	-	20.0
Հատուկ նպատակային այլ նյութեր	315.0	100.0	256.0
Դրամաշնորհներ	-	100.0	40.0
Սոցիալական օգնություններ	370.0	530.0	460.0
Այլ ծախսեր	62.0	70.1	75.0
Բ. Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	**2736.0**	**3080.3**	**3031.6**
Շենք և շինությունների կառուցում	950.0	3080.3	1089.6
Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	980.0	-	-
Տրանսպորտային սարքավորումներ			900.0
Վարչական սարքավորումներ	672.0	-	370.0
Այլ մեքենաներ և սարքավորումներ	134.0	-	672.0
Ընդամենը ծախսեր	**17198.7**	**18855.7**	**17596.8**

Դրամարկղային ծախսերը 2011թ.-ին 2009թ. նկատմամբ աճել են 2.3%-ով, այդ թվում՝ ընթացիկ ծախսեր՝ 0.7%-ով, ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր (կապիտալ)՝ 10.8%-ով:

Հաշվապահական հաշվառման և դրամարկղային գործառնությունների վարման վերաբերյալ: Հաշվապահական հաշվառումը չի կազմակերպվել և վարվել «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի և այն կարգավորող իրավական ակտերի դրույթներին ու պահանջներին համապատասխան, չի տարվել մեմորիալ-օրդերային եղանակով, կատարված ֆինանսական գործառույթներին հաշվային պլանին համապատասխան հաշվապահական ձևակերպումներ չեն տրվել:

Աշխատավարձերի, արձակուրդների տրամադրման և արձակուրդային վճարների հաշվարկման վերաբերյալ: Աշխատավարձերի ընտրանքային ստուգմամբ պարզվեց, որ առկա են մի շարք անճշտություններ: 2009թ. ապրիլին Ռ. Վարդազարյանը 2 օր գտնվել է արձակուրդում, սակայն վճարվել է լրիվ ամսվա աշխատավարձ, կամ ավելի է հաշվարկվել 8095 դրամ:

Գյուղապետին արձակուրդի ժամանակ փոխարինել է տեղակալը, որին վճարվել է նրանց աշխատավարձերի տարբերությունը: Գյուղապետի տեղակալի պարտականությունների մեջ մտնում է նաև գյուղապետի բացակայության ժամանակ նրան փոխարինելը, ուստի հավելյալ աշխատավարձի տրամադրումը անհիմն է: Նշված խախտման հետևանքով 2011թ.-ին գյուղապետի տեղակալին ավելի է հաշվարկվել 27840 դրամ աշխատավարձ:

2010թ. հունիսի 24-ին ՀՀ աշխատանքային օրենսգրքում կատարվել են փոփոխություններ: Համաձայն կատարված փոփոխությունների արձակուրդների տրամադրումը պետք է կատարվեր աշխատանքային օրերով, փոխվել է նաև միջին աշխատավարձի և արձակուրդային վճարների հաշվարկման կարգը: Միջին աշխատավարձի և օրերի սխալ հաշվարկելու հետևանքով որոշ դեպքերում սխալ է հաշվարկվել արձակուրդային գումարները, ինչի հետևանքով 2010թ. պակաս է հաշվարկվել Գ. Գալստյանին՝ 1191 դրամ. Մ. Շուբինային՝ 1429 դրամ և ավելի Ա. Հարությունյանին՝ 3059 դրամ:

Համայնքի ղեկավարը 2010 և 2011թվականներին ավագանու անդամ Ռոզա Խեչումյանի հետ կնքել է ծառայության մատուցման պայմանագրեր, համաձայն որի Ռ. Խեչումյանը պարտավորվում է գյուղատնտեսական աշխատանքների գծով կատարել խորհրդատվական աշխատանքներ: Պայմանագրի գինը յուրաքանչյուր տարվա համար կազմել է 600.0 հազ. դրամ, որը երկու տարվա համար կազմել է 1200.0 հազ. դրամ: Համաձայն հաշվապահական փաստաթղթերի նրան յուրաքանչյուր ամիս հաշվարկվել է 50.0 հազ. դրամ աշխատավարձ, կատարվել են համապատասխան պահումներ և դրամարկղի միջոցով կանխիկ վճարվել են գումարները(ինչպես աշխատակազմի մյուս աշխատակիցներին): Սակայն մատուցված ծառայությունների դիմաց կատարվող ծախսերը հիմնավորելու համար անհրաժեշտ են համապատասխան փաստաթղթեր, իսկ գումարները վճարվում են անկանխիկ և վճարվող գումարներից պետական բյուջե փոխանցվող պահումները կատարվում են այլ կարգով:

Համայնքի ղեկավարին առաջարկվել է բացառել նման կարգով պայմանագրերի կնքումը և գումարների վճարումը:

Ֆոնդային բյուջեի ծախսերի վերաբերյալ: 2009թ.-ին ծախսերը կազմել են 2736.0 հազ. դրամ, 2010թ.-ին՝ 3080.0 հազ.դրամ, 2011թ.-ին՝ 3031.6 հազ. դրամ:

Կատարված ծախսերի օրինականությունների ուսումնասիրությամբ պարզվեց, որ դրանք նախատեսված են համայնքի բյուջեով, սակայն ծախսերը հիմնավորող փաստաթղթերում առկա են թերություններ և բացթողումներ: Գյուղապետի հայտարարության համաձայն աշխատանքները փաստացի կատարվել

են, սակայն ըստ սահմանված կարգի աշխատանքների կատարման փաստը պետք է հիմնավորված լինեն նաև համապատասխան փաստաթղթերով(նախահաշիվներ, կատարողական ակտեր, տեխնիկական հսկողություն և այլն): Աշխատանքները հիմնականում կատարվել են «Կ և Ա Մոնտաժշին» ՍՊԸ-ի(փողոցների լուսավորություն, խաղահրապարակի և կանգառների կառուցում, աղբարկղների պատրաստում և այլն), «Պրիզմա-Վան» ՍՊԸ-ի(ակումբի շենքի հատակի վերանորոգում), «Արարատ Գինոսյան» ՍՊԸ-ի(ջրագծի վերանորոգում) և «Լ. Մեսրոպյան և ընկերներ» ՍՊԸ-ի(տրակտորի և ծառայողական մարդատար մեքենայի վերանորոգում) կողմից:

2010թ.-ին ֆոնդային բյուջեի ծախսերից 2880.3 հազ. դրամը ուղղվել է փողոցների լուսավորության ցանցի կառուցմանը (կապալառու «Կ և Ա Մոնտաժշին» ՍՊԸ): Լերմոնտովո համայնքի կապալային աշխատանքների կատարման թիվ ԼԳ-ԱՇՁԲ – 01/ 10» պայմանագրի կատարվող աշխատանքների գինը նախատեսված է 2996.0 հազ. դրամ: Համաձայն կատարողական ակտի կատարվել է 2876.3 հազ դրամ աշխատանքներ, որի դիմաց փաստացի փոխանցվել է 2880.3 հազ. դրամ, կամ կատարողականից ավել է փոխանցվել 4.0 հազ դրամ:

2011թ. համայնքի հաշվեկշռում գտնվող տրակտորի և մարդատար ավտոմեքենայի վերանորոգման համար «Լ. Մեսրոպյան և ընկերներ» ՍՊԸ-ին փոխանցվել է 900.0 հազ. դրամ: Ծախսերը հիմնավորող փաստաթղթերը լրացվում են բացթողումներով և թերություններով: Ծախսերը հիմնավորելու համար մասնագիտացված կազմակերպության կողմից անհրաժեշտ էր ներկայացնել տրանսպորտային միջոցների վիճակի վերաբերյալ թերությունների ակտեր, կազմել համապատասխան ծախսերի նախահաշիվներ և կատարողական ակտեր:

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի տարածքում գործում են երեք մթերային խանութներ և երկու հասարարական սննդի օբյեկտներ, որոնց համար 2009թ., 2010թ., 2011թ և 2012թ տեղական տուրք է սահմանվել ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար, եռամյակը՝ 1000դրամ և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, եռամսյակը՝ 1500 դրամ, ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար ընթացիկ տարվա համար սահմանվել է առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ, իսկ հասարական սննդի օբյեկտների համար՝ 50000 դրամ: 2011թ. համար նախատեսված տեղական տուրքը երեք տնտեսավարող սուբյեկտներից և երկու հասարակական սննդի օբյետներից ամբողջությամբ գանձվել է:

Հանձնաժողովի փաստեց, որ համապատասխան թույլտվությունների համար մուծումները կատարվում են ընթացքում և ոչ թե նախապես եռամսյակը սկսվելուց առաջ, կամ խախտվել է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջները.«Տեղական տուրք (կամ) վճար գանձող մարմինների պաշտոնատար անձինք տեղական տուրքի կամ վճարի հաշվարկն իրականացնում և տեղական տուրք կամ վճարը գանձում են նախքան այդ լիազորությունների կամ գործողությունների իրականացումը.. »

Առևտրի և ծառայությունների ոլորտում համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի և «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17.1 հոդվածի չեն իրականացվել համապատասխան հսկողություն: Ընդունված կարգի համաձայն համայնքի ղեկավարը իրավասու է

առևտրի օբյեկտներում կատարել ստուգումներ և անօրինական գործունեության համար նշանակել համապատասխան տուգանքներ:

Վաճառքի թույլտվությունների տրման ժամանակ խախտվել է ՀՀ կառավարության 2007թ. հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշման պահանջը՝ չեն ներկայացվել թույլտվության հայտեր, չեն լրացվել սահմանված թույլտվության ձևեր:

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համաձայն հողային հաշվեկշռի համայնքը ունի 77.00հա վարելահող, 173.00հա խոտհարք և 389.00հա արոտավայր: Հողամասերի վարձակալությունները և օտարումները իրականացվում են սահմանված կարգով: 70.0 հա վարելահողերի և 63.00 հա խոտհարքների պայմանագրերն ունեն պետական գրանցում, իսկ օգտագործվող 57.0 հա խոտհարքների և արոտավայրերի համար պայմանագրեր չեն կնքվել և տրված են ցուցակային կարգով: Սահմանված կարգով հողամասեր են օտարվել 2009թ.-ին՝ 0.47հա, 2010թ.-ին՝ 0.71հա և 2011թ.-ին՝ 0.0475հա: 2011թ. հողի կատեգորիայի փոփոխման հետևանքով համայնքի բյուջե լրացուցիչ մուծվել է մոտ 5.1մլն. դրամ:

Համայնքի ամենամյա հողային հաշվեկշիռը չի լրացվում հողերի հաշվառման գրքում: Համայնքի ղեկավարի կողմից հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ ստուգումներ չեն իրականացվել, բնականաբար չի լրացվել ստուգումների մատյանը: Այլ խախտումներ չեն հայտնաբերվել:

ԱՎԱԳԱՆՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1) Ավագանին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան իր կանոնակարգը ընդունել է 2008թ. նոյեմբերի 27-ի թիվ 21 որոշմամբ, որոշման հավելվածը փակցված է ավագանու նստավայրում, որոշումը ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն.

2) 2009 թվականի փետրվարի 26-ի թիվ 9 որոշմամբ հաստատել է համայնքի զարգացման ծրագիրը, սահմանված ժամկետում, որոշումը ՀՀ արդարադատության նախարարություն չի ուղարկվել.

3) ա/ համայնքի ավագանին սահմանված կարգով հաստատել է 2009թ., 2010թ., 2011թ., 2012թ. համայնքի բյուջեները,

բ/հաստատել է բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները,

գ/հաստատել է բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունները, 16.01.2010թ. թիվ 1 որոշմամբ համայնքի ղեկավարի և աշխատակազմի կատարած աշխատանքները գնահատվել են բավարար, այլ ոչ թե հաստատվել է 2009թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.

4) համայնքի բյուջեի կատարման վերահսկման առումով պետք է նշել, որ համայնքի ավագանուն ներկայացվել է համայնքի բյուջեի կատարման ընթացքի մասին 2009թ. 1-ին եռամսյակի, 2010թ. 1-ին և 2-րդ եռամսյակների, 2011թ. 1-ին կիսամյակի հաղորդումները և բյուջեի կատարման ընթացքի մասին չեն ներկայացվել նշված թվականների մյուս եռամսյակների հաղորդումները.

5) չի որոշվել կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները.

6) համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ վերահսկողության իրականացման առումով անհրաժեշտ է նշել, որ համայնքի ղեկավարի անհատական ակտերը սահմանված ժամկետում ավագանու անդամներին չի ուղարկվել և ավագանու նստավայրում չի փակցվել.

7) համայնքի ղեկավարի՝ օրենքին և իրավական այլ ակտերին հակասող որոշումները դատական կարգով չեն վիճարկվել.

8) համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշվել է աշխատակազմի աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին որոշմամբ.

9) համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին օրենքով սահմանված կարգով որոշումներ չեն կայացվել.

10) 16.02.2010թ. թիվ 3-Ն որոշմամբ հաստատվել են առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները, որոշումը ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն.

11) 26.01.2009թ. թիվ 2-Ն, 11.12.2009թ. թիվ 27-Ն, 22.12.2010թ. թիվ 23-Ն, 12.12.2011թ. թիվ 20-Ն որոշումներով օրենքով սահմանված կարգով սահմանվել են 2009, 2010, 2011, 2012թթ. համար տեղական տուրքերի եւ վճարների տեսակները ու դրույքաչափերը, որոշումները ուղարկվել են ՀՀ արդարադատության նախարարություն.

12) համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարներ չեն գանձվում, ավագանու 30.06.2011թ. թիվ 13 որոշմամբ սահմանվել է, որ աղբահանության ծառայության վճարները կատարել գյուղապետարանի միջոցներով.

13) համայնքի ղեկավարի առաջարկությամբ համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարելու մասին որոշման կայացում, դրանց վարձավճարների և օտարման գների չափերի ու պայմանների, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գների հաստատում.

ա/ 13.04.2009թ. թիվ 12 որոշմամբ համայնքային սեփականություն համարվող հողը տրամադրվել է վարձակալության, որոշվել է տրամադրվող հողի չափը, չի որոշվել վարձավճարի չափը,

բ/ 02.09.2009թ. թիվ 21 և 07.09.2010թ. թիվ 17 որոշումներով ավագանին որոշել է համայնքային սեփականություն համարվող հողը օտարել, հաստատել է օտարման պայմանները և մեկնարկային գները,

14) 26.01.2009թ. թիվ 3, 11.12.2009թ. թիվ 28, 22.12.2010թ. թիվ 22, 12.12.2011թ. թիվ 21 որոշումներով հաստատվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

15) բնակավայրի քաղաքաշինական կանոնադրության չի հաստատվել.

16) 11.11.2009թ. թիվ 29, 26.11.2010թ. թիվ 19, 08.11.2011թ. թիվ 18 որոշումներով հաստատվել են համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը.

17) 2009-2011թթ. ընթացքում ավագանու հաստատմանը չի ներկայացվել համայնքի հողային հաշվեկշիռը.

18) 14.04.2011թ. թիվ 13 որոշմամբ հաստատվել է համայնքի հոգաբարձության և խնամակալության հանձնաժողովի կազմը.

19) 16.02.2010թ. թիվ 2 որոշմամբ հաստատվել է քաղաքացիների ընդունելության կարգը, որոշման հավելվածը փակցված է գյուղապետարանում.

20) ավագանու 23.07.2010թ. թիվ 14, 15.03.2010թ. թիվ 3, 26.11.2010թ. թիվ 20 որոշումներով աշխարհագրական օբյեկտներին տրամադրվել է հասցեներ, ինչը համայնքի ղեկավարի լիազորությունն է այլ ոչ թե ավագանու.

21) երկու անգամ չի ապահովվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերության պահանջը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՅԼ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) Հրավիրվել և վարվել են ավագանու կանոնակարգով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ավագանու նիստեր.

2) համայնքի ղեկավարը անհատական ակտեր ընդունելուց հետո երկօրյա ժամկետում համայնքի ավագանու անդամներին չեն ուղարկվել և համայնքի ավագանու նստավայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում չեն փակցվել.

3) համայնքի զարգացման քառամյա ծրագիրը ներկայացվել է ավագանու հաստատմանը.

4) աշխատակազմի կանոնադրության հաստատում.

5) աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացվել են ավագանու հաստատմանը.

6)համայնքի ավագանուն ներկայացրել է առաջարկություն՝ համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու մասին.

7) աշխարհագրական օբյեկտներին տրամադրել է հասցեներ.

8) իր իրավասության շրջանակում ընդունել է որոշումներ և արձակել է կարգադրություններ.

9) կազմակերպել է համայնքի բնակիչների հաշվառումը.

10) իրականացրել է քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է առել քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները և ձեռնարկել է համապատասխան միջոցներ.

11) համայնքի զինապարտների գրանցամատյանը վարվում է թերություններով, մասնավորապես լրացված է գրանցամատյանի 1-6 սյունակները, չեն լրացված 1997 և 1998 թթ. ծնվածների տվյալները:

Գյուղապետարանում առկա է ցուցատախտակ, համայնքի ավագանու որոշումները ցուցատախտակին փակցված են: Չեն փակցված 2012թ. համար սահմանված տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը:

Գյուղապետարանում առկա է քաղաքացիների դիմումների, բողոքների և առաջարկությունների մտից մատյանը, գործադիր, տարածքային կառավարման մարմիններից և կազմակերպություններից ստացված գրությունների մտից մատյանը, և կազմակերպություններ ուղարկվող գրությունների ելից մատյանը:

1. ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 16-ի N 197-Ա հրամանի N 35 հավելվածով հաստատված Լերմոնտովոյի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկի համաձայն աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները 3-ն են:

2. Համայնքի ղեկավարի 2010թ. հունվարի 21-ի N 01-Ն որոշմամբ հաստատվել է աշխատակազմի կանոնադրությունը:

3. Համայնքի ավագանու 12.12.2011թ. N 21 որոշմամբ հաստատվել է գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը: Հաստատված հաստիքացուցակը համայնքային ծառայության պաշտոնների մասով համապատասխանում է ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի կողմից հաստատված պաշտոնների անվանացանկին:

4. Համայնքի ղեկավարը 2010թ. փետրվարի 1-ին և 2011թ. հունվարի 10-ին ավագանու անդամ Ռոզա Խեչումյանի հետ կնքել է ծառայության մատուցման պայմանագրեր (2010թ. փետրվարի 1-ի պայմանագիրը գործել է մինչև 2010թ. դեկտեմբերի 30-ը, իսկ 2011թ. հունվարի 10-ի պայմանագիրը մինչև 2011թ. դեկտեմբերի 30-ը), ըստ որոնց՝ Ռոզա Խեչումյանը ստանձնել է համայնքի գյուղատնտեսական աշխատանքների գծով խորհրդատուի պարտականությունները մինչև 2011թ. դեկտեմբերի 30-ը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն համայնքի ավագանու անդամը չի կարող միաժամանակ աշխատել նույն աշխատակազմում: 18-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն նույն աշխատակազմում աշխատելու դեպքում ավագանու անդամը պարտավոր է մինչև ավագանու հերթական նիստը հրաժարվել ավագանու անդամությունից, հակառակ դեպքում նրա լիազորությունները դադարեցվում են:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն համայնքի ավագանու անդամության հետ անհամատեղելի պաշտոն զբաղեցնելու դեպքում ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են համայնքի ավագանու հերթական նիստը սկսվելու պահից և դրա վերաբերյալ ավագանին կազմում է արձանագրություն, որն ստորագրում են ավագանու մյուս անդամները կամ համայնքի ղեկավարը:

Սակայն ավագանու անդամ Ռոզա Խեչումյանը, համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը անտեսել են օրենքի այս պահանջը և Ռոզա Խեչումյանի լիազորությունները վաղաժամկետ չեն դադարեցվել:

Համայնքի ղեկավարի կողմից խախտվել են նաև ավագանու կողմից 2010-2011 թվականների համար հաստատված գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի մասին որոշումները և նա հաստիքացուցակով չնախատեսված հաստիք է պահել:

Նույն ձևով խախտելով համայնքի ավագանու 12.12.2011թ. N 21 որոշումը համայնքի ղեկավարը 2012թ. հունվարի 10-ին Ռոբերտ Վարդազարյանի հետ է կնքել ծառայության մատուցման թիվ 01 պայմանագիրը և Ռոբերտ Վարդազարյանն է

ստանձնել համայնքի գյուղատնտեսական աշխատանքների գծով խորհրդատուի պարտականությունները:

5. Աշխատակազմի համայնքային ծառայողների անձնական գործերը վարվում են ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 7-ի N 20-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգին համապատասխան:

6.ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից 2011թ. իրականացված համայնքի ղեկավարի աշխատակազմի կադրային գործի վարման նկատմամբ վերահսկողության ընթացքում հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ տարվել են զգալի աշխատանքներ, ինչի արդյունքում հայտնաբերված թերությունները ամբողջությամբ վերացվել են:

Հանձնաժողովի նախագահ՝
Ֆին. եւ սոց. տնտ. զարգացման
վարչության պետի տեղակալ

---------- Լ. Բերոյան

Լերմոնտովո համայնքի ղեկավար

---------- Է. Չախալյան

Անդամներ՝

ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչ. ՏԻ և
համայնքային ծառ. հարց. բաժնի պետ

---------- Ժ. Ղազարյան

Լերմոնտովոյի գյուղապետարանի
աշխատակազմի քարտուղար

---------- Ա. Հարությունյան

ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչ. ՀԳՄՏՍ
գործ. համակարգման բաժնի պետ

---------- Վ. Հովհաննիսյան

Լերմոնտովոյի գյուղապետարանի աշխ.-ազմի
առաջ. մասնագետ՝ հաշվապահ

---------- Մ. Բոլոտինա

Իրավաբանական բաժնի պետ

---------- Ա. Սահակյան

Հողաշինության և հողօգտագործման
բաժնի պետ

---------- Ռ. Քոչարյան

Ֆին. և սոց. տնտ. զարգ. վարչության
ֆին-տնտ. բաժնի գլխ. մասնագետ

---------- Ա. Բեջանյան

Քաղաքաշինության վարչ. ճարտ-շինարարական
բաժնի գլխավոր մասնագետ

---------- Գ. Հախինյան